Funded by
the European Union

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն



# ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ 2022

*Սույն հետազոտությունը հրապարակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից իրականացվող «Քաղաքացիական հասարակության շրջանում հանրային հաշվետվողականության ապահովման մեխանիզմների ամրապնդման (ՍԱՆԿՈՒՍ)» ծրագրի շրջանակներում իրականացվող «Աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետությունը» ծրագրի շրջանակներում: Հետազոտության բովանդակության համար պատասխանատու է հեղինակը և այն չի արտացոլում Եվրոպական միության տեսակետները:*

Հետազոտության հեղինակ՝
**Անահիտ Մկրտչյան**

Հետազոտության կազմմանն աջակցել են՝
**Հասմիկ Չարխչյանը**
**Ալբինե Ազատյանը**
**Անուշ Համբարձումյանը**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ....2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....3

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏՐԱՆՔ....5

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ....11

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՄԲ....12

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ....15

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ....23

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԿԱԳ ՏԵՂԱԿԱԼԻ ԵՎ ԴԱԿ ԴԵՐԸ....41

ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ/ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ....43

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ....44

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ....46

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ....49

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ....54

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ....59

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....61

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՄԱԿ | Միավորված ազգերի կազմակերպություն |
| ԿԳՄՍ | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն |
| ԵՊՀ | Երևանի պետական համալսարան |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ԱԽ | Աշակերտական խորհուրդ |
| ՄԿԱԳ | Տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ |
| ԴԱԿ | Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ |

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության ոլորտը ՀՀ-ում բազմիցս հանդիսացել է ուսումնասիրությունների առարկա, սակայն դրա բաղկացուցիչ մասը հանդիսացող աշակերտական խորհուրդների ձևավորումն ու գործունեությունը չեն ենթարկվել համապարփակ ուսումնասիրության: Առկա ուսումնասիրությունները փաստում են, որ աշակերտական խորհուրդները կրում են ձևական բնույթ, արդյունավետ չեն գործում և ծառայում են այլ կողմնակի նպատակների: Այսինքն, կրթությունը դեռևս մասնակցային բաց համակարգ չէ[1] և գործում է փակ հասարակարգի տրամաբանությամբ:[2] Գործող իրավակարգավորումներին համապատասխան աշակերտական խորհուրդները ձևավորվում են ընտրությամբ: Ընտրության գործընթացի իմաստը և նշանակությունը դպրոցում ժողովրդավարական գործընթաց կազմակերպելը և աշակերտների ձայնը լսելի դարձնելն է:[3] Սակայն, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, այն ձախողված գործընթաց է դպրոցներում՝ հաշվի առնելով աշակերտական խորհուրդների անդամների թեկնածուների ընտրության վրա ուսուցիչների և/կամ վարչակազմի ուղղակի և անուղղակի ազդեցությունը:[4]

Ըստ որոշ հետազոտությունների՝ աշակերտական խորհուրդները ինքնավար են, սակայն Հայաստանում այս խորհուրդների մի մասը կարիք ունի վերակազմակերպվելու և իրական ինքնավարության ձգտելու:[5] Աշակերտական խորհուրդները լիարժեքորեն չեն իրացնում իրենց լիազորությունները և խորհրդատվական ձայնը դպրոցների խորհուրդներում կազմակերպվող նիստերի և քննարկումների շրջանակներում, պասիվություն են ցուցաբերում դպրոցի ներքին կյանքին, աշակերտների շահերին, դպրոցի բյուջեին, համայնքային կյանքին առնչվող հարցերի քննարկման, գործողությունների կատարման և առաջարկների մշակման հարցերում: Փոխարենը, դպրոցներում աշակերտական խորհուրդների գործունեությունը գերազանցապես սահմանափակվում է մշակութային միջոցառումների կազմակերպմամբ[6] Մինչդեռ, աշակերտները պետք է ներգրավված լինեն իրենց առնչվող որոշումների կայացմանը, ազատորեն արտահայտեն իրենց կարծիքներն ու կարիքները, փորձարկեն իր իրավունքներն ու ազատությունները կրթական հաստատության ներսում: Այսինքն, փաստացի, ԱԽ-ները գրեթե դեր չեն խաղում դպրոցի կառավարման գործում, [7]նրանց աշխատանքը թափանցիկ չէ և որոշումները ոչ միշտ են հասանելի:[8]

---

[1] Մ.Կ. Գալստյան Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն-Երիտասարդների մասնակցության հարթակները ՀՀ կրթական համակարգում: ԼՐԱԲԵՐ. Հայ-ռուսական համալսարանի սերիա՝ հումանիտար և հասարակական գիտություններ (34) ՀՌՀ հրատարակչություն № 1/2020
[2] Մարդկային Զարգացման Ազգային Զեկույց, 2006թ.
[3] Մ.Կ. Գալստյան. Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն-Երիտասարդների մասնակցության հարթակները ՀՀ կրթական համակարգում: ԼՐԱԲԵՐ. Հայ-ռուսական համալսարանի սերիա՝ հումանիտար և հասարակական գիտություններ (34) ՀՌՀ հրատարակչություն № 1/2020
[4] Մաթոսյան Տ., Գալստյան Մ., Ժողովրդավարական կրթությունը Հայաստանում. իրավիճակի վերլուծություն, ՍԻՎԻՏԱՍ ՀԿ, 2015թ.
[5] Ինչպես ստեղծել արդյունավետ աշակերտական խորհուրդ ուղեցույց. Հանրային քաղաքականության ինստիտուտ, 2021թ., http://ipp.am/3935-2/
[6] Մ.Կ. Գալստյան. Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն-Երիտասարդների մասնակցության հարթակները ՀՀ կրթական համակարգում: ԼՐԱԲԵՐ. Հայ-ռուսական համալսարանի սերիա՝ հումանիտար և հասարակական գիտություններ (34) ՀՌՀ հրատարակչություն № 1/2020
[7] Վիգեն Շիրվանյան- Աշակերտական խորհուրդների գործունեությունը Հայաստանում. քաղաքականության վերլուծություն, Երևան 2013թ.
[8] Վահրամ Թոքմաջյան- Հանրակրթության կառավարման համակարգի խնդիրները, Երևան 2020, https://bit.ly/3RGQDUp

Հետազոտությունները ցույց են տալիս նաև, որ աշակերտական խորհուրդների ինքնակազմակերպման գործընթացում կա քաղաքացիական հասարակության ազդեցության բարձրացման միտում և որպես դրանց գործունեության վրա ազդող դրական գործոն է դիտարկվում դպրոցների և ՀԿ-ների միջև համագործակցությունը: ՀԿ-ների միջոցով հաճախ աշակերտներին փոխանցվում են գիտելիքներ ժողովրդավարության մասին, ներդրվում են ժողովրդավարական պրակտիկաներ, ինչն իր հերթին նպաստում է աշակերտական խորհուրդների գործունեության բարելավմանը:[9]

Առկա հետազոտություններով վեր հանված և թվարկված խնդիրների արդիականության գնահատման և ԱԽ գործունեության արդյունավետության, ներառյալ՝ անկախության, ինքնավարության, ներգրավվածության, մասնակցության ու թափանցիկության ուսումնասիրության նպատակով նախաձեռնվել է սույն հետազոտության իրականացումը, որն իր հերթին հետագայում այլ ծրագրերի և հետազոտությունների իրականացման և ԱԽ-ների կարողությունների զարգացման խթան կհանդիսանա: Հետազոտությունն իրականացվել է նախաձեռնող խմբի կողմից՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոնի կողմից իրականացվող և Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական հասարակության շրջանում հանրային հաշվետվողականության ապահովման մեխանիզմների ամրապնդման (ՍԱՆԿՈՒՍ)» ծրագրի շրջանակներում, «Աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետության ուսումնասիրություն» ծրագրի ներքո:

«Աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետության ուսումնասիրություն» ծրագրի նպատակն է ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետությունը, ներառյալ՝ աշակերտական խորհուրդների անկախությունը, ինքնավարությունը, ներգրավվածությունն ու մասնակցությունը և թափանցիկությունը: Ծրագրի խնդիրներն են բացահայտել աշակերտական խորհուրդների ձևավորման գործընթացի վրա ազդող դրական և բացասական գործոնները, գնահատել աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետությունը՝ դրանց անկախության, ինքնավարության, ներգրավվածության ու մասնակցության, թափանցիկության տեսանկյունից, վերլուծել աշակերտական խորհուրդներին առնչվող իրավական կարգավորումներն ու մշտադիտարկման արդյունքում վեր հանված խնդիրները և դրանց հիման վրա ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

Արդյունքում, հետազոտությունը գործող իրավակարգավորումների և մշտադիտարկմամբ հավաքագրված տվյալների վերլուծության և համեմատության հիման վրա վեր է հանել հանրակրթության ոլորտի կառավարման, խորհրդակցական մարմինների ներգրավմամբ դրա ուսումնական հաստատությունների կառավարման, աշակերտական խորհուրդների ձևավորման և գործունեության, աշակերտական խորհուրդների հետ աշխատանքում հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով (ՄԿԱԳ) տեղակալի և հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի (ԴԱԿ) դերի, տնօրենի թեկնածուի/հավակնորդի և աշակերտական խորհուրդների

[9] Մ.Կ. Գալստյան. Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն-Երիտասարդների մասնակցության հարթակները ՀՀ կրթական համակարգում: ԼՐԱԲԵՐ. Հայ-ռուսական համալսարանի սերիա՝ հումանիտար և հասարակական գիտություններ (34) ՀՌՀ հրատարակչություն № 1/2020

հանդիպումների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի, ուսումնական հաստատության գործունեության գնահատման (ներքին և արտաքին), ուսումնական հաստատության բյուջեի և ձեռնարկատիրական գործունեության հետ կապված խնդիրները և ներկայացրել համապատասխան առաջարկություններ ՀՀ կառավարությանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, ՀՀ ֆինանսների նախարարությանը, ՀՀ մարզպետարաններին, Երևանի քաղաքապետարանին, ՀԿ-ներին և դպրոցներին:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏՐԱՆՔ

Առաջադրված նպատակի իրագործման համար համադրվել են որակական հետազոտության մի շարք մեթոդներ:

**Փաստաթղթերի բովանդակային ուսումնասիրություն**

Այս մեթոդի շրջանակներում ուսումնասիրվել են կրթության ոլորտին, մասնավորապես՝ աշակերտական խորհուրդների գործունեությանն առնչվող ինչպես ներպետական (օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր), այնպես էլ միջազգային (կոնվենցիաներ) իրավական ակտեր: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով ուսումնասիրվել են նաև այլ փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ դպրոցների ներքին իրավական ակտերը, աշակերտական խորհուրդների նիստերի արձանագրությունները և այլն:

**Հարցում**

Այս մեթոդի շրջանակներում, հաշվի առնելով նաև, որ ՀՀ կառավարության 25 հուլիսի 2002 թ. N 1392-Ն որոշման N 2 հավելվածով սահմանվում է ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկն ըստ ենթակայությունների, հարցումներ են ուղարկվել ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, ՀՀ մարզպետարաններին, Երևանի քաղաքապետարանին, դպրոցներին, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ որոշակի փաստաթղթեր, վիճակագրական տվյալներ կամ հետազոտությունից բխող այլ տեղեկատվություն հայցելու և վերջիններիս ներկայացուցիչների հետ հարցազրույցներ իրականացնելու նպատակով:

**Ֆոկուս խմբային քննարկում**

Այս մեթոդի շրջանակներում քննարկումներ են անցկացվել Արագածոտնի մարզի թվով 2, Արարատի մարզի թվով 3, Արմավիրի մարզի թվով 3 և Երևան քաղաքի թվով 2 դպրոցների ԱԽ-ում ընդգրկված և ԱԽ-ում չընդգրկված սովորողների հետ: Աշակերտները ընտրվել են պատահականության սկզբունքով՝ դպրոցում ներկա գտնվող աշակերտներից, դասարանական մատյաններում առկա անուն ազգանուններից ամեն 5-րդը ընտրելու սկզբունքով: Յուրաքանչյուր քննարկմանը մասնակցել է 12 սովորող:

**Խորին հարցազրույց**

Այս մեթոդի շրջանակներում հարցազրույցներ են անցկացվել դպրոցների 6 ԱԽ նախագահների, 9 տնօրենների, 6 ԴԱԿ-ի և 4 ՄԿԱԳ-ի հետ:

**Փորձագիտական հարցազրույց**

Այս մեթոդի շրջանակներում հարցազրույցներ են անցկացվել 2 փորձագետների հետ, որոնք ներկայացնում են քաղաքացիական հասարակության կառույցներ: Որպես ոլորտի

քաղաքականության մշակող, հարցազրույցի անցկացման պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության Հանրակրթության վարչության պետի հետ, սակայն՝ 2022թ.-ի մայիսի 24-ին, առավոտյան ժամը 10:00-ին ԿԳՄՍ նախարարության մուտքի դիմաց ընդդիմության ներկայացուցիչների հանրահավաքի և ելք ու մուտքի արգելափակման[10] հետևանքով վարչության պետի հետ հանդիպումը տեղի չի ունեցել: Այլ օրերի վերաբերյալ լրացուցիչ պայմանավորվածություն ձեռք բերել հնարավոր չի եղել վարչության պետի աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով:

Արդյունքում, ընդհանուր առմամբ իրականացվել է թվով 7 հարցազրույց ԱԽ անդամների, 6 հարցազրույց ԱԽ նախագահների, 4 հարցազրույց ԱԽ-ում չընդգրկված աշակերտների, 6 հարցազրույց ԴԱԿ-ի, 4 հարցազրույց ՄԿԱԳ-ի, 9 հարցազրույց տնօրենների և 2 հարցազրույց ոլորտային փորձագետների հետ:

Առավել պատկերավոր տե՛ս աղյուսակ 1-ում:

*Աղյուսակ 1*

| **ԱԽ անդամներ** | **ԱԽ նախագահ** | **ԱԽ-ում չընդգրկված աշակերտներ** | **ԴԱԿ** | **ՄԿԱԳ** | **Տնօրեն** | **Փորձագետ** |
|---|---|---|---|---|---|---|
| **Հարցազրույցների թիվ** | | | | | | |
| **Թվով 7** | **Թվով 6** | **Թվով 4** | **Թվով 6** | **Թվով 4** | **Թվով 9** | **Թվով 2** |
| **Հարցազրույցների իրականացման վայր/դպրոց** | | | | | | |
| Աղավնատան միջնակարգ դպրոց | Ս. Սպանդարյանի անվան հ. 24 հիմնական դպրոց | Ս. Սպանդարյանի անվան հ. 24 հիմնական դպրոց | Աղձքի միջնակարգ դպրոց | Արալեզի միջնակարգ դպրոց | Աղավնատան միջնակարգ դպրոց | «Հանրային քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ի տնօրեն Ավետիք Մեջլումյան |
| Աղձքի միջնակարգ դպրոց | Արալեզի միջնակարգ դպրոց | Եղեգնավանի միջնակարգ դպրոց | Եղեգնավանի միջնակարգ դպրոց | Բաղրամյանի միջնակարգ դպրոց | Աղձքի միջնակարգ դպրոց | ԵՊՀ դասախոս Սերոբ Խաչատրյան |
| Արալեզի միջնակարգ դպրոց | Բաղրամյանի միջնակարգ դպրոց | Վաղարշապատի N 1 միջնակարգ դպրոց | Վաղարշապատի N 1 միջնակարգ դպրոց | «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր | Արալեզի միջնակարգ դպրոց | |

[10] ««Դիմադրություն» շարժման անդամները շրջափակել են ՀՀ ԱԳ նախարարության շենքը», www.armtimes.com կայք, 24.05.2022թ., https://www.armtimes.com/hy/article/237567

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Բաղրամյանի միջնակարգ դպրոց | Եղեգնավանի միջնակարգ դպրոց | Սասունիկի միջնակարգ դպրոց | «Յակոբ Կոջոյան» կրթահամալիր | Սասունիկի միջնակարգ դպրոց | Բաղրամյանի միջնակարգ դպրոց | |
| «Յակոբ Կոջոյան» կրթահամալիր | Սասունիկի միջնակարգ դպրոց | | Սասունիկի միջնակարգ դպրոց | | Եղեգնավանի միջնակարգ դպրոց | |
| Սասունիկի միջնակարգ դպրոց | Վեդու N 2 միջնակարգ դպրոց | | Վեդու N 2 միջնակարգ դպրոց | | Վաղարշապատի N 1 միջնակարգ դպրոց | |
| Վեդու N 2 միջնակարգ դպրոց | | | | | «Յակոբ Կոջոյան» կրթահամալիր | |
| | | | | | Սասունիկի միջնակարգ դպրոց | |
| | | | | | Վեդու N 2 միջնակարգ դպրոց | |

Սույն հետազոտության շրջանակներում դպրոցների ընտրանքը կատարվել է հաշվի առնելով մի քանի գործոններ և չափանիշներ՝ դրանց գտնվելու վայրը, սովորողների թիվը, հիմնական կամ միջնակարգ լինելը, ակտիվությունը, նոր կամ հին տնօրեն ունենալու հանգամանքը, ինչը հնարավորություն է տվել աշակերտական խորհուրդների գործունեությունն ու թափանցիկությունը դիտարկել հնարավոր տարբեր միջավայրներում՝ հասկանալու համար դրանց վրա ազդեցություն ունեցող գործոնները:

- Այսպես, տիպային ներկայացուցչականության ապահովման համար հաշվի է առնվել դպրոցի տեղակայման վայրը: Ընտրվել են դպրոցներ ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի մարզերից և Երևան քաղաքից: Ընտրվել են 6 գյուղական և 4 քաղաքային դպրոցներ: Ծրագրային ծավալներից ելնելով դպրոցների վայրի ընտրության վրա ազդեցություն է ունեցել նաև սույն ծրագրով ընդգրված աշխատակիցների բնակության և/կամ գործունեության վայրը:

- Դպրոցների ընտրության հաջորդ չափանիշը եղել է դպրոցի սովորողների թիվը: Ընտրվել են ինչպես քիչ թվով սովորողներ ունեցող, այնպես էլ մեծ թվով սովորողներ

ունեցող դպրոցները (ընտրված դպրոցների սովորողների նվազագույն թիվը՝ 193, առավելագույն թիվը՝ 842):

- Դպրոցների ընտրության հաջորդ չափանիշը եղել է դպրոցի տեսակը՝ հիմնական և միջնակարգ. ապահովվել է երկու տեսակի դպրոցների ընտրությունը: Ընտրվել են թվով 7 միջնակարգ և թվով 3 հիմնական դպրոցներ: Սույն հետազոտության ծավալներից ելնելով ավագ դպրոցներ չեն ընտրվել, սակայն 10-ից 12-րդ դասարանի աշակերտները դուրս չեն մնացել հետազոտությունից, քանզի ընտրված միջնակարգ դպրոցները արդեն իսկ ներառել են 10-ից 12-րդ դասարանները:

- Դպրոցների ընտրության համար հիմք է հանդիսացել նաև վերջիններիս ակտիվությունն ու պասիվությունը: Ակտիվությունն ու պասիվությունը գնահատվել են ըստ վերջիններիս կողմից իրականացված և լուսաբանված միջոցառումների և համագործակցությունների: Այսպես, ընտրվել են ակտիվությամբ առանձնացող թվով 3 և ակտիվության առանձնակի ցուցանիշներ չունեցող (ըստ համացանցում առկա տեղեկատվության) թվով 7 դպրոցներ:

- Դպրոցների ընտրության հաջորդ չափանիշը եղել է դպրոցի առավել վաղ նշանակված կամ նորանշանակ տնօրեն ունենալու հանգամանքը: Նորանշանակ են դիտարկվել մինչև մեկ ու կես տարի ժամկետով գործող տնօրենները: Ընտրվել են թվով 4 դպրոցներ, որոնք ունեցել են նորանշանակ տնօրեն և թվով 6 դպրոցներ, որոնք ունեցել են ավելի վաղ նշանակված տնօրեն:

Այսպես, ընտրանքի հիմքում ընկած չափանիշները հնարավորություն են տվել ամբողջության մեջ և օբյեկտիվորեն դիտարկել աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետությունը՝ տարբեր միջավայրային գործոնները հաշվի առնելով: Ընդ որում, դպրոցներից յուրաքանչյուրի ընտրության համար միաժամանակ առկա են եղել ընտրանքի մի քանի հիմքեր:

Առավել պատկերավոր տե՛ս աղյուսակ 2-ում:

*Աղյուսակ 2*

| N | Դպրոց | Քաղաք/ գյուղ | Հիմնական/ միջնակարգ | Սովորողներ ի թիվ | Ակտիվություն | Նորանշանակ/ ավելի վաղ նշանակված տնօրեն |
|---|---|---|---|---|---|---|
| | **Արագածոտնի մարզ** | | | | | |
| 1. | Սասունիկի միջնակարգ դպրոց | գյուղ | միջնակարգ | 366 սովորող | | Նորանշանակ տնօրեն |
| 2. | Աղձքի միջնակարգ դպրոց | գյուղ | միջնակարգ | 193 սովորող | Էլեկտրոնային ակտիվ հղում | Ավելի վաղ նշանակված տնօրեն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Արարատի մարզ** | | | | | |
| 3. | Վեդու N 2 միջնակարգ դպրոց | քաղաք | հիմնական | 842 սովորող | | Ավելի վաղ նշանակված տնօրեն |
| 4. | Եղեգնավանի միջնակարգ դպրոց | գյուղ | միջնակարգ | 201 սովորող | Էլեկտրոնային ակտիվ հղում 1<br><br>Էլեկտրոնային ակտիվ հղում 2<br><br>Էլեկտրոնային ակտիվ հղում 3<br><br>Էլեկտրոնային ակտիվ հղում 4 | Նորանշանակ տնօրեն |
| 5. | Արալեզի միջնակարգ դպրոց | գյուղ | միջնակարգ | 319 սովորող | | Ավելի վաղ նշանակված տնօրեն/ ժպ |
| | **Արմավիրի մարզ** | | | | | |
| 6. | Վաղարշապատի N 1 միջնակարգ դպրոց | քաղաք | հիմնական | 503 սովորող | | Նորանշանակ տնօրեն |
| 7. | Բաղրամյանի միջնակարգ դպրոց | գյուղ | միջնակարգ | 332 սովորող | | Ավելի վաղ նշանակված տնօրեն |
| 8. | Աղավնատան միջնակարգ դպրոց | գյուղ | միջնակարգ | 332 սովորող | | Ավելի վաղ նշանակված տնօրեն |

| | Երևան | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 9. | «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր | քաղաք | միջնակարգ | 475 սովորող | Էլեկտրոնային ակտիվ հղում 1<br><br>Էլեկտրոնային ակտիվ հղում 2<br><br>Էլեկտրոնային ակտիվ հղում 3<br><br>Էլեկտրոնային ակտիվ հղում 4<br><br>Էլեկտրոնային ակտիվ հղում 5<br><br>Էլեկտրոնային ակտիվ հղում 6 | Նորանշանակ տնօրեն |
| 10. | Ս. Սպանդարյանի անվան հ. 24 հիմնական դպրոց | քաղաք | հիմնական | 483 սովորող | | Ավելի վաղ նշանակված տնօրեն |

## ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հանրակրթության ոլորտի կառավարումն իրականացնում են կառավարությունը, կրթության պետական կառավարման լիազորված մարմինը, մարզպետները, Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը, մարզերում՝ մարզպետները և համայնքների ղեկավարները:[11] ՀՀ Սահմանադրությամբ ՀՀ Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է և նրա իրավասությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Կրթության ոլորտի պետական լիազոր մարմինը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

«Կրթության մասին» ՀՀ օրենքը[12] սահմանում է կառավարության, կրթության պետական լիազոր մարմնի ոլորտում ընդհանուր իրավասությունները, ինչպես նաև մարզպետների և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները հիմնականում հանրակրթության ոլորտում: «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է կրթության համակարգի կառավարմանը, ըստ որի ՀՀ կառավարությունը ապահովում է պետական կրթական քաղաքականության իրականացումը, հաստատում է պետական կրթական չափորոշիչները և դրանց ձևավորման կարգը, հաստատում է ուսուցանվող մասնագիտությունների ցանկը, հաստատում է հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերը, հաստատում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները, հաստատում է պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը և այլն, մարզպետը՝ ապահովում է մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը, վերահսկում է նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, ապահովում է կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, համայնքի ղեկավարը՝ պարտադիր լիազորության կարգով ուսումնական հաստատությունների ինքնակառավարման սկզբունքին համապատասխան աջակցում է համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և այլն: Այս գործառույթները գրեթե նույնությամբ ներկայացված են Տարածքային կառավարման մասին[13], Տեղական ինքնակառավարման մասին[14] և Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքներում[15]:

Հանրակրթության մասին ՀՀ օրենքը[16] նույնպես սահմանում է Հանրակրթության բնագավառում տարածքային կառավարման մարմնի և Երևանի քաղաքապետի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունները: **Դպրոցների՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպությունների ցանկն ըստ ենթակայությունների սահմանված է ՀՀ**

---

[11] Վահրամ Թոքմաջյան- Հանրակրթության կառավարման համակարգի խնդիրները, Երևան 2020թ., Հանրակրթության-կառավարման-համակարգի-խնդիրները.pdf (osf.am)
[12] «Կրթության մասին» ՀՀ օրենքը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=159419
[13] «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքը, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154477
[14] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=159078
[15] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=159086
[16] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=153802

**կառավարության 25 հուլիսի 2002 թ. N 1392-Ն որոշման[17] N 2 հավելվածով** (ենթակա են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, ՀՀ մարզպետներին ու Երևանի քաղաքապետին):

Չնայած գործող իրավակարգավորումներին, հանրակրթության ոլորտի կառավարման վերաբերյալ մինչ օրս առկա են կարծրատիպային տարընկալումներ ինչպե՛ս դպրոցների ուսուցիչների, տնօրենների, այնպե՛ս էլ որոշ մարզպետարանների ներկայացուցիչների շրջանում: Մասնավորապես, սույն հետազոտության շրջանակներում ընտրված Արմավիրի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող դպրոցներում համապատասխան հարցազրույցներ իրականացնելու թույլտվությունը մարզպետարանի լիազորությունների սահմանում է: Մինչդեռ, դպրոցներում հարցազրույցների իրականացման թույլտվության տրամադրման նպատակով Արմավիրի մարզպետարանը պահանջել է դիմել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, թեև նման կարգ և պարտադիր պահանջ օրենսդրությունը չի սահմանում:

> *«Երբ ուղիղ դիմում ես դպրոցին, տնօրենների մեծ մասն ասում է, որ մեզ պետք է թույլտվություն տա ինչ-որ վերադաս մարմին՝ նախարարությունը, մարզպետարանը, չգիտեմ, ինչ-որ մեկը: Կամ, օրինակ՝ ուզում ենք ինչ-որ ուսուցչի հետ հարցազրույց անել, ուսուցիչն ինքն էլ է այդ ինքնացենզուրան կիրառում, ասում է, թող տնօրենը թույլ տա, բայց այդպիսի կարգավորում չկա»: Այսինքն, սկսած դպրոցի սովորողներից, ուսուցիչներից և տնօրեններից, ընդհուպ մարզպետարանները ներառյալ ունեն արմատացած գործելակերպ այն հարցում, որ նրանց կողմից իրականացվելիք յուրաքանչյուր գործողության և կայացվելիք որոշման համար անհրաժեշտ պայման է «վերադասության կարգով», իսկ առավելապես ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից տրված թույլտվությունը»:*
>
> *Փորձագետ*

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՄԲ

Պետական ուսումնական հաստատությունն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ): Ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ, որոնց ձևավորման կարգը և իրավասությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Ընդ որում, ուսումնական հաստատության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև այլ խորհրդակցական մարմիններ՝ հոգաբարձուների և այլ խորհուրդներ: Հետազոտությունը ցույց տվեց, որ որոշ դպրոցներ պատրաստվում են ստեղծել նաև շրջանավարտների խորհուրդ, ինչի վերաբերյալ իրարամերժ դիրքորոշումներ են հայտնել հարցմանը մասնակցած փորձագետները: Ընդհանուր առմամբ, նոր խորհուրդ ստեղծելու մտադրությունը ողջունելի է, սակայն, դրանց գոյությունը չպետք է լինի սոսկ ինքնանպատակ:

---

[17] ՀՀ կառավարության 25 հուլիսի 2002 թ.-ի ««Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թ.-ի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 1996 թ.-ի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1392-Ն որոշումը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=14994

*«Շրջանավարտների խորհուրդ ունենալը շատ լավ գաղափար է, ու զարմանալի է, թե մինչև հիմա ինչու չի արվել: Օրինակ, ես պատկերացնում եմ, որ եթե իմ դպրոցը ինձ հրավիրեր ինչ-որ մի թեմայով դաս վարելու, կամ ոչ միայն ինձ, չէ որ այդքան շրջանավարտ է ունեցել դպրոցը, հաստատ նրանց մեջ կլինեն մարդիկ, որ լավ դասախոս են, գործարար, կարող են գալ ինչ-որ ներդրում անել և այլն: Ինչ-որ ռեսուրս չի պահանջում, պետք է ուղղակի բազա ստեղծել, կոնտակտները շարունակաբար թարմացնել և հասկանալ, ով որտեղ է հիմա գտնվում»:*

*Փորձագետ*

*«Ոչ մի նոր խորհուրդ էլ պետք չէ այս պահին ստեղծել, ընդամենը պետք է մտածենք, ինչ-որ ունենք, դա ոնց ենք աշխատեցնում: Քիչ թե շատ մանկավարժական խորհուրդն է աշխատում, բայց դա էլ, պարզ է, դպրոցի ուսուցիչներ են, աշխատավարձ են ստանում, ու չեն կարող ինչ-որ մի բան չանել: Բայց մանկավարժական խորհրդում շատ բան տնօրենն է որոշում»:*

*Փորձագետ*

Ուսումնական հաստատության կառավարմանը մասնակցում են նաև ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: **Անհրաժեշտության դեպքում, աշակերտական խորհրդի ներկայացուցիչները (սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ) հրավիրվում են նաև մասնակցելու մանկավարժական խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:** Հետազոտությունը ցույց է տվել, որ ԱԽ գործունեության հիմնական խնդիրներից մեկն այն է, որ շատ դպրոցներում այն տնօրինության կողմից չի դիտարկվում որպես հաստատության կառավարման խորհրդին, մանկավարժական խորհրդին, ծնողական խորհրդին և տնօրինության կողմից սովորողներին անմիջականորեն վերաբերող այլ աշխատանքների իրականացմանն աջակցող մարմին, իսկ ԱԽ նախագահը չի մասնակցում հաստատության մանկավարժական, ծնողական խորհուրդների, կառավարման խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Գործնականում աշակերտները գրեթե չեն մասնակցում մանկավարժական խորհրդի նիստերին և իրենք ևս գտնում են, որ «այնտեղ քննարկվում են այնպիսի հարցեր, որոնցում իրենց ներկայությունը պարտադիր չէ», իսկ մասնակցելու դեպքում էլ առավելապես քննարկվում են էքսկուրսիաների, առաջադիմության և կարգապահության հետ կապված հարցեր: Մինչդեռ գործող օրենսդրության համաձայն՝ **աշակերտական խորհրդի նախագահը** հանդիսանում է սովորողների ներկայացուցիչը հաստատության մյուս մարմինների հետ փոխհարաբերություններում, **մասնակցում է հաստատության մանկավարժական, ծնողական խորհուրդների, դպրոցի կառավարման խորհրդի, տնօրինության աշխատանքներին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:** Հետազոտության շրջանակներում, որոշ դպրոցների տնօրեններ նշել են, որ նպատակահարմար գտնելու դեպքում, նիստերին կարող են թույլատրել մասնակցելու միայն իրենց նախընտրած «ճիշտ» աշակերտներին. «ամեն աշակերտ չի կարող մասնակցել այդ նիստերին»: Սույնով ընդգծվում է տնօրինության խտրական վերաբերմունքը աշակետների տարբեր խմբերի նկատմամբ և խախտվում է մանկավարժական խորհրդի նիստերին՝ սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ, ԱԽ նախագահի խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցության իրավունքը:

*«Չենք մասնակցում դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի նիստերին, քանի որ այնտեղ քննարկվում են այնպիսի հարցեր, որոնցում պարտադիր չէ մեր ներկայությունը: Նույնիսկ կարող են լինել դեպքեր, որ ընդհանրապես մեր ներկայությունը պետք չէ: Տվյալ պահին մենք նախաձեռնում ենք աղբամաններ տեղադրել դրսում, այդ նախաձեռնությունը տնօրենի կողմից մեծ աջակցության արժանացավ, որովհետև ինքը ևս նպաստում է դրան, և տվել է իր համաձայնությունը»:*

*ԱԽ նախագահ*

*«Հիմնականում նախագահը մասնակցում է դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի նիստերին, իսկ անդամները՝ ոչ: «Մեզ չվերաբերող» հարցերի ժամանակ մենք մասնակցություն չենք ունենում: Հիմնականում պետք է քննարկենք այն միջոցառումները, որ ուզում են անցկացնել երեխաների հետ, էքսկուրսիաները, առաջադիմության հարցերը»:*

*ԱԽ անդամներ*

*«Մանկավարժական խորհրդի ժողովներին հիմնականում նախագահն է մասնակցում, երբ կրթության բարելավման և կարգապահության հետ կապված հարցեր են քննարկվում»:*

*ԱԽ նախագահ*

*«Մեր դպրոցում բոլոր խորհուրդներն էլ աշխատում են թափանցիկ, ամեն ինչի մասին մենք տեղյակ ենք, եթե մենք տեղյակ ենք, տեղյակ է նաև աշակերտական խորհուրդը, չկա մի բան, որ գաղտնի արվի ու իրենք տեղյակ չլինեն դրանից, որովհետև ամեն մի որոշման հետևում կանգնած է մի աշխատանք: Եթե որոշումը կա, այդ աշխատանքը պիտի կատարենք մենք, մեր օգնականն էլ աշակերտական խորհուրդն է»:*

*ՄԿԱԳ*

*«Դա տարիներ շարունակ եղել է, հիմա դրա խնդիրը տնօրենից է մեծ մասը գալիս, երբ չի ընդառաջում, մեկ-երկու՝ երեխա պատնեշի է հանդիպում: Մենք այդ խնդիրը չունենք: Եթե դուք քննարկեք ԱԽ ցանկացած անդամի հետ, իրենց յուրաքանչյուր խոսք, տնօրենի, տնօրինության հետ քննարկվում է, վերլուծվում է, և դրանց մեծ ընդառաջում է տրվում: Անգամ բյուջեի մեջ փոփոխություններ են անում»:*

*ԴԱԿ*

*«Մանկավարժական խորհրդի նիստին մասնակցել եմ սեպտեմբեր ամսին, երբ աշակերտների առաջադիմությունն էր քննարկվում: Մայիսին կլինի նաև մանկավարժական խորհրդի նիստ, որտեղ էլի կմասնակցեմ»:*

*ԱԽ նախագահ*

*«Առաջարկություններ եղել են, բայց դեռ չենք մասնակցել»:*

*ԱԽ անդամներ*

*«Եթե ԱԽ-ն որոշի իհարկե կուզենք մասնակցել»:*

*ԱԽ նախագահ*

*«Չեն մասնակցել, սակայն առաջարկություն է արվել թեմատիկ միջոցառման անցկացման, որը հավանություն է ստացել տնօրենի կողմից և կյանքի կոչվել: Առաջարկություն է արվել բացակայությունները կանխելու նպատակով կիրառել կանխարգելիչ միջոցներ ու դա դեռևս հղկման փուլում է»:*

*Ախ անդամներ*

*«Չենք մասնակցել: Չեն էլ եղել աշակերտների կողմից առաջարկություններ: Դրանց լինելու դեպքում անպայաման ես կներկայացնեի տնօրենին, մանկավարժներին»:*

*Ախ նախագահ*

*«Նիստերի չենք մասնակցել, սակայն դրանց մասին մեզ միշտ տեղեկացրել են»:*

*Ախ անդամներ*

*«Երբևէ մասնակցելու ցանկություն չեմ ունեցել»:*

*Ախ նախագահ*

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Աշակերտական խորհուրդը դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է,[18] որն ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան՝ դպրոցի գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու, դրանք դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ ներկայացնելու, սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով և ղեկավարվում է նախարարության կողմից հաստատված աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ:

Աշակերտական խորհուրդների ձևավորման և գործունեության հետ կապված հիմնական իրավակարգավորումները տրված են «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի 17 մայիսի 2011թ. N 571-Ն հրամանով:[19] Հաստատության սովորողների ինքնավարության բարձրագույն մարմինը հաստատության 6-12-րդ (հիմնական դպրոցի համար՝ 6-9-րդ, ավագ դպրոցի համար՝ 10-12-րդ) դասարանների սովորողների ընդհանուր ժողովն է: Հաստատությունում աշակերտական խորհրդի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, ընդհանուր ժողովին կարող են մասնակցել նաև 5-րդ դասարանի սովորողները՝

[18] ՀՀ կրթության եվ գիտության նախարարի 18 մարտի 2010 թ.-ի «Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձեվավորման կարգը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության կրթության եվ գիտության նախարարի 2006 թ.-ի դեկտեմբերի 8-ի N 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 113-Ն հրամանը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=151876

[19] ՀՀ կրթության եվ գիտության նախարարի 17 մայիսի 2011 թ.-ի ««Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առեվտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 571-Ն հրամանը, https://www.arlis.am/documentview.aspx?docID=69283

խորհրդակցական ձայնի իրավունքով: Սովորողների ընդհանուր ժողովը հրավիրվում է տարեկան երկու անգամից ոչ պակաս՝ աշակերտական խորհրդի կողմից, իսկ արտահերթ ժողով կարող է հրավիրվել աշակերտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով կամ հաստատության տնօրենի նախաձեռնությամբ:

Այսպես, չնայած գործող իրավակարգավորումներին, հետազոտությամբ բացահայտվել է, որ որոշ դպրոցների սովորողներ ընդհանրապես չեն մասնակցում ընդհանուր ժողովին և տեղեկացված չեն դրա մասին, ընդհանուր ժողովին հիմնականում մասնակցում են միայն աշակերտական խորհրդի անդամները և տնօրենը: Ընդ որում, շատ հաճախ ընդհանուր ժողովի ընթացքում տնօրենի կողմից չի ներկայացվում ամենամյա ծրագրային ուղերձ:

*«Ընդհանուր ժողովին չենք մասնակցում»:*

*Ախ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Չէ չի եղել, որ մասնակցենք»:*

*Ախ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Մի անգամ է եղել, որ մասնակցել ենք, դա եղել է 9-րդ դասարանում, և մասնակցել է նաև մեր տնօրենը, եղել է կարգապահության և նախաձեռնության վերաբերյալ: Մեր դասարանում էլ է եղել մի անգամ, ծնողների հետ միասին մեր ժողովին ներկա է եղել տնօրենը, խոսակցությունը եղել է մեր հագուկապից և մեր վարքից: Անցյալ տարի, որ ծնողական ժողով էին կազմակերպել, էքսկուրսիաներին էր վերաբերվում, մեզ էլ էին հրավիրել, որ մեր կարծիքը հայտնեինք, թե որտեղ էինք ցանկանում գնալ:Վարքագծի վերաբերյալ հարցեր են քննարկվել, նաև առաջադիմությանը վերաբերող հարցեր»:*

*Ախ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Չենք մասնակցում ընդհանուր ժողովին, սակայն դասարաններում, կազմակերպիչն ու ԴԱԿ-ը ներկայացրել են արտադպրոցական կազմակերպվելիք աշխատանքների մասին, հորդորել մասնակցել, ծանոթացրել այդ գործընթացի էությանը»:*

*Ախ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Ընդհանուր ժողովը եղել է մինչև սեպտեմբերի 15-ը, մասնակցել եմ նաև ես: Հաստատության գործունեության վերաբերյալ ամենամյա ծրագրային ուղերձ չեմ ներկայացրել: Արտահերթ ժողով եղել է Ախ անդամների 1/3-ի պահանջով: Նրանք ցանկանում էին տաղանդի բացահայտման մրցաշար կազմակերպել դպրոցականների շրջանում»:*

*Տնօրեն*

*«Ընդհանուր ժողովը հրավիրվում է տարեկան մեկ անգամ, սեպտեմբեր ամսին: Այն հրավիրվում է Ախ նախագահի կողմից դպրոցում հայտարարությունը փակցնելու միջոցով: Հաստատության գործունեության վերաբերյալ ամենամյա ծրագրային ուղերձ չեմ ներկայացնում»:*

*Տնօրեն*

*«Ընդհանուր ժողովը հրավիրվում է սեպտեմբեր ամսին, կազմակերպում է ԴԱԿ-ը, մասնակցում են աշակերտական խորհրդի անդամները և տնօրենը: Քննարկում ենք նախագահի ընտրության հարցը, կատարվելիք միջոցառումները, հնչում են տարբեր մտքեր ու գաղափարներ: Ընդհանուր ժողովը հրավիրվում է տարեկան երկու անգամ: Մեկ անգամ արտահերթ հրավիրվել է տնօրենի պահանջով, քննարկվել է ցերեկույթի կազմակերպման ընթացքը գյուղի զոհված հերոսի հիշատակի առթիվ»:*

<u>*Ախ-ում չընդգրկված աշակերտներ*</u>

*«Ընդհանուր ժողովը լինում է երկու անգամ, սեպտեմբերին և տարեվերջին: Տարեվերջին ընդհանուր հաշվետվություն են աշակերտները ներկայացնում: Գիտեք, ես ուզում եմ իրենք ամեն ինչի սկիզբն ու վերջը հասկանան ինչ է: Այսինքն, ինքը տարեսկզբին ինչ խնդիր է դրել իր առջև և տարեվերջին ինչ լուծում է տվել դրան: Հասավ իր նպատակին, թե՝ չէ: Արտահերթ եղել է, ճիշտն ասած, Ախ-ն միջոցառման համար հավաքվեց, որոշեց, ես նպատակը տեսա, ու մենք ստեղծեցինք համապատասխան պայմաններ, շաբաթ-կիրակիները օգտագործեցին երեխաները: Սեպտեմբերի մեկին ես իրենց ամեն անգամ մի կարգախոս եմ ընտրում, այս տարի եղել է «Ողջույն, հայ ժողովրդի պանծալի զավակներ»: Երբ որ ունեցանք այդ յոթ զոհերը մեր դպրոցի աշակերտների, մեր երեխաներն էլ մեզ հետ միասին շատ թևաթափ էին: Բայց երբեք թույլ չեմ տալիս, որ իրենք այդ սահմանը անցնեն, և չեն էլ անցնում: Միշտ էլ սեպտեմբերի մեկին, երբ որ հավաքվել ենք, քննարկել ենք մի քանի ավանդական հարցեր: Մայիս ամսվա վերջին քննարկում ենք, թե աշակերտները ինչ հագուկապով կուզենան ներկայանալ դպրոց, գույներն են ընտրում և այլն:*

<u>*Տնօրեն*</u>

*«Տարվա սկզբում, որ լինում է այդ ժողովը, նախ մենք առաջինը ընտում ենք, թե ով որ բնագավառից պետք է լինի: Եթե ցանկանում ենք, փոխում ենք մեր բնագավառը, ընտրում ուրիշը ու որոշում, թե տարվա ընթացքում ինչեր պետք է անենք, ինչ պլաններ ունենք, նախաձեռնություններ: Բնագավառները՝ մշակութային, տեղեկատվական, սպորտի, կարգապահական, հանձնախմբեր են: Միջանցքում սահմանում ենք հերթապահություն, յուրաքանչյուր աշակերտուհի կամ աշակերտ տարբեր տարածքում հերթապահություն է իրականացնում և կարգապահություն է հաստատում»:*

<u>*Ախ անդամներ*</u>

*«Սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում սովորողների առաջին ընդհանուր ժողով հրավիրելուց 3 օր առաջ ծանուցում ենք սովորողներին: Մասնակցում են 6-12-րդ դասարանների սովորողները: Մասնակցում են նաև 5-րդ դասարանի սովորողները խորհրդակցական ձայնի իրավունքով, իրենց պատրաստում ենք արդեն գալիք խորհրդում մասնակից դառնալուն: Քննարկում ենք ընդհանուր խնդիրները, աշակերտական խորհրդի ձևավորման և խորհրդի նախագահի ընրության գործընթացն ենք ներկայացնում: Տալիս ենք անցյալ տարվա հաշվետվությունը, սույն տարվա անելիքներին ենք ներկայացնում: Ես ներկայացնում եմ հաստատության գործունեության վերաբերյալ իմ ամենամյա ծրագրային ուղերձը: Սովորողների ընդհանուր ժողով հրավիրվում է տարվա մեջ 2 անգամ: Իմ կողմից հրավիրվել է արտահերթ ժողով, որի անցկացման մասին 3 օր առաջ ծանուցվել է: Ախ-ի կողմից արտահերթ ժողով չի հրավիրվել»:*

<u>*Տնօրեն*</u>

Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր հաստատության սովորողների ընդհանուր ժողովը իրավասու է օրինակելի կանոնադրության հիման վրա ստեղծել հաստատության աշակերտական խորհուրդ և ընդունել իր կանոնադրությունը՝ դրան համապատասխան իրականացնելով սովորողների ինքնավարություն: Հետազոտության շրջանակներում ընդգրկված դպրոցներում ԱԽ-ները հիմնականում գործել են օրինակելի կանոնադրության հիման վրա, առանց դրանում էական փոփոխություններ կատարելու: Որոշ ԱԽ-ներ ունեցել են իրենց անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշներ և անհատականացման այլ միջոցներ:

*«Մեր աշակերտական խորհուրդը բավականին ակտիվ է և անգամ կանոնադրության մեջ աշակերտական խորհրդի փոփոխություններ ենք կատարել, կետեր ավելացրել»:*

*Տնօրեն*

*«ԱԽ կանոնադրությունը կազմել եմ ես՝ ԱԽ նախագահը, ԴԱԿ-ը և իմ օգնականը՝ հաշվի առնելով երեխաների կարծիքը, թե որ կանոնին են համաձայն և որին համաձայն չեն՝ քվեարկության արդյունքում: ԱԽ-ի անվանումն է «Ոսկեծղի», և մենք ունենք մեր նշանը, լոգոն, որոնք հենց մեր թղթապանակներում փակցրած ունենք»:*

*ԱԽ անդամներ*

*«Անձամբ ես մասնակցել եմ ԱԽ կանոնադրության մշակմանը, որը կատարվել է տնօրենի ուղերձով, տնօրենը ներկա է եղել այդ ժողովին: Մենք ԱԽ կազմով որոշեցինք ունենալ լոգո, որը դրված է հենց ուսուցչանոցի կողքին, պատկերված է արև, որը բնութագրում է մեր դպրոցի ջերմությունը, և հոսող գետը, որը բնութագրում է սերունդների փոփոխությունը»:*

*ԱԽ անդամներ*

*«Առաջնորդվում ենք նախարարության կողմից հաստատված օրինակելի կանոնադրությամբ»:*

*ԱԽ անդամներ*

*«Նախարարության կողմից հաստատված օրինակելի կանոնադրության հիման վրա մասնակցել և մշակել ենք մեր կանոնադրությունը»:*

*ԱԽ անդամներ*

Աշակերտական ինքնավարության մարմինների ընտրությունների կազմակերպման նպատակով ձևավորվում է ընտրական հանձնախումբ՝ յուրաքանչյուր դասարանի խորհրդի կազմում չընդգրկված մեկական սովորողներից: Ընտրական հանձնախումբը՝ կազմակերպում է դասարանական խորհուրդների ընտրությունները և հաստատում դասարանական խորհուրդների կազմերը, դասարանական խորհուրդների ընտրությունների արդյունքների հիման վրա հաստատում է հաստատության աշակերտական խորհրդի կազմը, կազմակերպում է աշակերտական խորհրդի նախագահի ընտրությունները:

Դասարանական խորհուրդը կազմվում է տվյալ դասարանից ընտրված երեքից հինգ սովորողներից, մեկ տարի լիազորությունների ժամկետով: Մինչև երեք սովորողների համակազմ ունեցող դասարանի բոլոր սովորողները համարվում են աշակերտական խորհրդի անդամներ: Դասարանական ընդհանուր ժողովում առավել ձայներ հավաքած դասարանական խորհրդի անդամը համարվում է դասարանական խորհրդի նախագահ:

Դասարանական խորհուրդը համագործակցում է աշակերտական խորհրդի հանձնախմբերի հետ՝ դասարանական և դպրոցական միջոցառումների կազմակերպման համար:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ շատ սովորողներ տեղեկացված չեն ոչ միայն ԱԽ գործունեությունից, այլև հենց իրենց անմիջական մասնակցությունը ենթադրող դասարանական խորհուրդների գործունեությունից: Որոշ սովորողներ էլ ընդգրկված չեն դասարանական և աշակերտական խորհուրդներում՝ անտեսվածության և խտրականության պատճառով:

*«Գիտեինք աշակերտական խորհրդի գոյության մասին, սակայն դասարանական խորհուրդների մասին նոր ենք իմացել: Դասարանական խորհուրդները հրավիրվում են այն ժամանակ, երբ կոնկրետ ծայրահեղ խնդիր է լինում ու դրա հրատապ լուծում է պահանջվում:*

*ԱԽ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Մենք չենք ընդգրկվել դասարանական խորհրդում, մեզ ուշադրություն չեն դարձրել: Չկա չափանիշ, եթե հարգված է, կարող է ընդգրկվել»:*

*ԱԽ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Կուզենայինք լինել ԱԽ անդամ: Չկանք, որովհետև մեզ չեն նկատել, կարելի է ասել, եթե նկատած լինեին, կհամաձայնեինք»:*

*ԱԽ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Այս «չնկատել» ասվածը հենց ցույց է տալիս խնդիրը: Այսինքն, ուսուցիչներն էլ, աշակերտներն էլ պատկերացնում են, որ այդ ամբողջ պրոցեսը պետք է մեծահասակը առաջ տանի, կապ չունի տնօրեն, փոխտնօրեն, թե՝ ուսուցիչ: Ու քանի որ հիմնական ակնկալիքը մեծահասակից է, դրա համար են ասում «չեն նկատել»: Բայց, եթե աշակերտները իմանան ու մտածեն, որ իրենք են պատասխանատուն, էլ չեն էլ ասի «մեզ չնկատեցին»: Իրենք պետք է ընտրություն կազմակերպեն, իրենք դասարանով հավաքվեն, որոշեն: Դժվար թե երեխաները մեկը մյուսին չնկատեն, մի քիչ դժվար է դա պատկերացնել: Այսինքն, «չնկատել» ասելը նկատի ունեն, որ ուսուցիչը չի առաջադրել թեկնածություն, կամ այնպես է արել, որ մեկը լինի ակտիվ, մյուսը՝ ոչ: Այդ բառը հենց այս խնդիրն է ցույց տալիս իմ կարծիքով»:*

*Փորձագետ*

Այսպես, աշակերտական խորհուրդը ձևավորվում է հաստատության 6-12-րդ (հիմնական դպրոցի համար՝ 6-9-րդ, ավագ դպրոցի համար՝ 10-12-րդ) դասարանների դասարանական ժողովներում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրված մինչև երկու ներկայացուցիչներից, դասարանական ժողովներից հետո՝ 10-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ ուստարվա սեպտեմբերի 20-ը: Աշակերտական խորհրդի նիստին, խորհրդակցական ձայնի իրավունքով, կարող են մասնակցել դասղեկները:

Աշակերտական խորհրդի նախագահն ընտրվում է հաստատության սովորողների կողմից՝ փակ, գաղտնի քվեարկության միջոցով, ձայների պարզ մեծամասնությամբ, սակայն ոչ պակաս, քան սովորողների ընդհանուր թվի կեսից ավելիի մասնակցությամբ: Չնայած այս իրավակարգավորմանը, հետազոտությունը ցույց է տվել, որ դպրոցներում ԱԽ նախագահն

ընտրվում է միայն դասարանական խորհրդի նախագահների կամ աշակերտական խորհրդի անդամների կողմից և դպրոցի մյուս սովորողները չեն մասնակցում նախագահի ընտրության քվեարկությանը:

*«Ախ նախագահն ընտրվում է դասարանական խորհրդի նախագահների կողմից: Չենք մասնակցել նախագահի քվեարկությանը»:*

*Ախ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Մեր Ախ նախագահն ընտրվել է աշակերտական խորհրդի անդամների քվեարկությամբ, քվեարկությունը եղել է փակ: Սկզբից ծրագրերը ներկայացրել են թեկնածուները և կարծեմ միաձայն ընտրվել է»:*

*Ախ անդամներ*

Աշակերտական խորհրդի նախագահի թեկնածուներ առաջադրվում են միայն աշակերտական խորհրդի անդամներից՝ տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 20-25-ն ընկած ժամանակահատվածում: Թեկնածուները, համաձայն ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցի, ներկայացնում են հաստատության աշակերտական խորհրդի գործունեության իրենց ծրագրերը: Ընտրության արդյունքները քվեարկությունից անմիջապես հետո ամփոփում և հայտարարում է ընտրական հանձնախումբը:

Ի տարբերություն ոլորտում կատարված նախկին հետազոտությունների, ըստ որոնց Ախ նախագահի թեկնածու են առաջադրվում հիմնականում բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները և ուշադրություն է դարձվում նաև աշակերտի սեռային պատկանելությանը, սույն հետազոտությունը ցույց տվեց, որ այդ մոտեցումը դեռևս մասամբ պահպանվում է միայն դպրոցների տնօրենությունների մոտ: Մինչդեռ դպրոցի սովորողներն այդ հարցում ունեն ավելի առաջադեմ մոտեցում և նախապատվությունը տալիս են առաջնորդի հատկանիշներով օժտված թեկնածուներին՝ զերծ գենդերային խտրականությունից: Աշակերտների կարծիքով Ախ նախագահի առաջնահերթ հատկանիշներն են ակտիվությունը, պարտաճանաչությունը, կարգապահությունը, համբերատարությունը, բարի համբավը, «լավ մարդ և լավ ընկեր» լինելը և այլն:

*«Նախագահ կարող է լինել այն աշակերտը, որն ակտիվ է, պարտաճանաչ, իր գործի մեջ հմուտ և փորձ ունեցող, նա, ով ունի հետաքրքիր մտքեր ու կարողանում է դրանք արտահայտել, լավ մարդ է ու լավ ընկեր, կարողանում է նվաճել ընտրողների համակրանքը»:*

*Ախ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Սեռը բոլորովին նշանակություն չունի, իսկ գրագիտությունն առաջնային է, քանի որ ոչ մեկին դատարկ մարդ պետք չէ, այն էլ Ախ նախագահ: Միայն գնահատականներով չի չափվում, պետք է լինի ստեղծագործ, ունենա մշակութային գիտելիքներ»:*

*Ախ նախագահ*

*«Մենք ունենք տղա, ում ձայնը լսելի է: Ինքը լավ չի սովորում, բայց ինքը կազմակերպել է հերթապահությունը փոյեներում (ճեմասրահ) ու իր ձայնը լավ լսելի է դպրոցում: Այսինքն,*

*իր խոսքը հարգում են, ու կարևոր է նման մասնիկ ունենալ ամեն Ախ-ում: Ճիշտ է, սովորող էլ լինի, չի խանգարի, բայց որ ձայնը լսելի է, տենց մարդիկ շատ են պետք»:*

*Ախ անդամներ*

*«Անկեղծ ասած, կարծում եմ, որ բարձր առաջադիմությունը Ախ անդամ կամ Ախ նախագահ ընտրվելու հարցում դրական է, կունենա ազդեցություն, որովհետև խելացի երեխան կարող է շատ ավելի լավ կազմակերպել իր ծրագիրը, կարողանա ներկայացնել, ներգրավել աշակերտներին, դառնալ ավելի մրցունակ, օրինակ հանդիսանա իր լավ խոսքով, արարքներով, Այստեղ կարևոր է նաև իր մարդկային որակները, լիդերին բնորոշ առաջարկները, իսկ բարձր առաջադիմությամբ երեխան կարող է, որովհետև մենք այսօր հասել ենք 21-րդ դարի մի շեմի, որտեղ ոչ միայն լիդերներ ծնվում են, այլ նաև դառնում»:*

*Տնօրեն*

*«Շատ կուզենայի, որ Ախ նախագահ արական սեռին տրվեր: Ուղղակի հիմա տղաները մի քիչ պասիվ են, մի քիչ խուսափում են պատասխանատվությունից: Մենք այս տարի ընտրել ենք Ախ նախագահ և իր օգնական ընտրել ենք իգական սեռի ներկայացուցիչներ, բայց իրենց օգնական էլ ունենք երկու տղաներ»:*

*ՄԿԱԳ*

*«Հիմնականում Ախ անդամ կամ նախագահ ընտրելուց աշակերտի ունակությունները, գիտելիքները, այսպես ասած, չենք հաշվի առնում, որովհետև գիտելիքներով ամեն ինչ չի վերջանում, ու երեխան կարող է ընդհանրապես չսովորել օրինակ, բայց ունենա շատ լավ հմտություններ, այլ ունակություններ, որոնք սովորողը չունի հաստատ և հիմնականում այլ արժեքները մարդկային ևս հաշվի ենք առնում՝ կարգապահությունը, կազմակերպվածությունը և ամենակարևորը համբերատարությունը: Կապ չունի աղջիկ, թե՝ տղա, կարևորը պատասխանատվության զգացողությունն է և կազմակերպելու հմտությունները, կազմակերպվածությունը, մենք էլ ընտրեցինք Մարգարիտային բոլորով և Ծովինարին՝ ավագի օգնականին, շատ արդար, ճիշտ ընտրություն ենք կատարել: Սեռը չափորոշիչ չէ մարդուն ներկայացնելու, մարդու ինչ-որ կարողությունները սահմանափակելու, կամ էլ հակառակը, իրեն ավելի վեր դասելու համար և այդ պատճառով մեզ համար այդքան էական չէր, թե ինչ սեռին կպատկանի մեր Ախ նախագահը: Մենք հիմնվել ենք նրա այլ կարողությունների վրա»:*

*Ախ անդամներ*

*«Ախ նախագահ կարող է լինել այն մարդը, որը հետևում է կարգապահությանը, դպրոցից դուրս գալուց մաքրում է իր դասարանը, և հետևում է օրենքներին: Պետք է երեխաներին հավասար հարգի, բոլորին հավասար ասի, թե ճիշտը որն է, և կատարեն իր ասածը»:*

*Ախ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Դասղեկները այնպես են անում, որ ընտրվի ամենալավը, այսինքն՝ այդ ձևով ավելի կանխատեսելի է դառնում ընտրությունը: Մենք նույնիսկ դեպքեր գիտեինք, որ ուսուցիչներն էլ էին մասնակցում այդ ընտրություններին, պաշտոնապես իրենք քվեարկում էին»:*

*Փորձագետ*

*«Իմ համոզմամբ ընդհանրապես սեռը կամ բարձր առաջադիմությունը բացարձակ պետք է դեր չխաղան: Ցանկացած աշակերտ, որն ուզում է ակտիվ լինել ԱԽ-ում, ընտրվի, ինչ-որ գործունեություն ծավալի, պետք է ունենա այդ հնարավորությունը: Բայց, օրինակ, երբ մենք մրցույթ արեցինք հայտերի, որ պետք է ընտրեինք ձմեռային ճամբարի մասնակիցներ, (ձմեռային ճամբարն էլ հենց կարողությունների զարգացմանն էր ուղղված), տեսանք, որ տնօրենները կամ ուսուցիչները, ընդհանրապես, ում հետ որ հանդիպել էինք, հիմնականում ուղղորդում են, կամ իրազեկում են այդ մրցույթի մասնակցելու այն աշակերտներին, որոնց համարում են լավ սովորող, կամ օրինակելի վարք ցուցաբերող: Այսինքն, ի սկզբանե իրենց մոտ կա այդ կարծրատիպը, պատկերացումը, որ բոլոր տեսակի ակտիվություններում, զբաղմունքներում, գործողություններում պետք է առաջ մղեն առաջադիմություն ունեցողներին, ինչը շատ սխալ է: Հակառակը՝ պետք է հնարավորինս բաց իրազեկեն, տեղեկացնեն, որ նաև այն աշակերտը, որի, միգուցե առաջադիմությունը թույլ է, այս եղանակով ավելի լավ դրսևորվի»:*

*<u>Փորձագետ</u>*

Աշակերտական խորհրդի նախագահին ընտրվում է մեկ ուսումնական տարի ժամկետով: Նույն անձը կարող է վերընտրվել, սակայն ոչ ավելի, քան երկու անգամ: Վերընտրման դեպք է արձանագրվել նաև հետազոտությամբ: Սա կարող է խնդրահարույց դիտարկվել այն պարագայում, եթե այլ աշակերտների համար չեն ստեղծվել թեկնածություն առաջադրելու և մրցակցության իրական ու հավասար պայմաններ:

*«Ընտրվել եմ այս ուսումնական տարվա սկզբին, երկրորդ անգամ: Աշակերտական խորհուրդն ընտրել է թեկնածուների, երկուսով էինք, մյուս թեկնածուն հիմա իմ քարտուղարն է»:*

*<u>ԱԽ նախագահ</u>*

Ինչպե՛ս դասարանական, այնպե՛ս էլ աշակերտական խորհրդի նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են այլ հաստատություն (դասարանական խորհուրդների դեպքում նաև այլ դասարան) տեղափոխվելու, հրաժարական տալու, ինչպես նաև նրան անվստահություն հայտնելու դեպքերում: Հետազոտության շրջանակներում բացահայտվել է միայն դասարանական խորհրդի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպք՝ նրան անվստահություն հայտնելու հիմքով: Այն կիրառվում է ԱԽ օրինակելի կանոնադրությամբ սահմանված լիազորությունները գերազանցելու կամ պարտականությունները չկատարելու դեպքերում:

*«Մեկ դասարանի պարագայում նման դեպք եղել էր, նրան անվստահություն էին հայտնել իր վատ վարքագծի համար»:*

*<u>ԱԽ-ում չընդգրկված աշակերտներ</u>*

*«Չի եղել ԱԽ նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպք, քանի որ մեր տնօրենը և այն մարդիկ ովքեր ընտրել են ԱԽ նախագահին, լավ ընտրություն են կատարել, և մինչև օրս ԱԽ նախագահը ոչ մի թերություն չի ունեցել»:*

*<u>ԱԽ անդամներ</u>*

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Աշակերտական խորհուրդն իր իրավասության շրջանակում՝ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է հաստատության կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի նիստերին՝ սովորողներին վերաբերող ուսուցման բովանդակության, գիտելիքների յուրացման որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկումներին: Աշակերտական խորհուրդը կարծիք է ներկայացնում հաստատության մանկավարժական խորհրդին: Առանձին կարող է ստեղծել նաև մանկապատանեկան ակումբներ և աջակցել դրանց աշխատանքների կազմակերպմանը, մասնակցել համայնքին օժանդակող ծրագրերի իրականացմանը:
Հետազոտությունը ցույց է տվել, որ դպրոցների արտադասարանական և արտադպրոցական խմբակների գործունեությունը հիմնականում դադարեցվել է Կորոնավիրուսով պայմանավորված, մինչդեռ շատ աշակերտներ ունեցել են բազմաբնույթ հետաքրքրություններ, որոնք բավարարելու համար հաճախ նույնիսկ համայնքից համայնք են տեղափոխվել (հետաքրքրությունների շարքում է պարը, երգը, ջութակը, նկարչությունը, ֆուտբոլը, վոլեյբոլը, կարատեն, լեզուները, տեղեկատվական տեխնոլոգիաները և այլն): Դպրոցներում հիմնականում չկան նաև աշակերտների կողմից ստեղծված ակումբներ և դրանց ստեղծման ուղղությամբ քննարկումները դեռևս ընթացքում են:

*«Տարիներ առաջ մենք ունեցել ենք խմբակներ, ես մեծ տեղ եմ տալիս խմբակներին: Ցավում եմ, որ արդեն երրորդ տարին է, թույլ չեն տալիս, որ խմբակներ ունենանք մեր դպրոցում: Երեք տարի է գործում է միայն եզդիերենի խմբակը, միայն դա ունենք: Շատ ենք տեղ տալիս փոքրամասնություններին՝ իրենց ավանդույթները, իրենց լեզուն պահպանելու համար: Վեց ժամ ունենք շաբաթական եզդիերենի խմբակի, Բաքոյան Հաջին է դասավանդում: Իսկ նախորդ տարիներին մենք ունեցել ենք այլ խմբակներ՝ ծեռագործի, խոհարարական, հեյունագործության: Հիմա գյուղում մենք ունենք պարի, դհոլի, կարատեի խմբակներ: Կարծում եմ, որ միայն ուսումով չեն դաստիարակում երեխային, կողքից նաև պետք են այդ խմբակները: Ինչքան շատ լինեն, այնքան աշակերտի օգուտն է: Ֆուտբոլի խմբակ ունենք, Նոր Կյանքից, Սիսավանից տղաներ կան, որ գալիս, մասնակցում են:*

*ՄԿԱԳ*

*«Ունեինք արտադասարանական շատ խմբակներ, գործում էին: Կովիդի հետ սահմանափակումներ եղան, թույլ չտվեցին, որոշ ժամանակով դադարեցվել է, հիմա նորից ուզում ենք գործածել այդ խմբակները: Երեխաները հաճախում են երաժշտական դպրոց, գեղարվեստի դպրոց, առանձին նկարչական դպրոց ունենք, վոկալի դասեր են սովորում, դերասանություն: Խմբակ հաճախողների ռեսուրսը դպրոցում օգտագործվում է. օրինակ՝ ունենք աշակերտ, ով դպրոցի համար ավտոմատ զանգ է հավաքել, միջոցները տրամադրում է տնօրինությունը, որպեսզի կարողանա ծրագիրը իրականացնել: Ունենք լավ նկարող աշակերտներ, որոնք բազմաթիվ մրցույթների, միջազգային անգամ, մասնակցել են, ունենք գրքելեն գործող երեխաներ, երաժշտական հաճախող երեխաներ, ունենք «Գրան Պրի» մրցանակ շահած երեխաներ, բոլոր ասպարեզներում ունենք: Այս պահին ունենք արտադասարանական շախմատի խմբակ, տարբեր գյուղերից գալիս են, և ունենք մեկ աշակերտ, արդեն ինքը միջազգային ստանդարտները հաղթահարել է, 6-րդ դասարանի աշակերտ է»:*

*ԴԱԿ*

*«Դպրոցում կա արտադասարանական գործունեության մեկ խմբակ, երեք ուսումնական կաբինետ: Կերպարվեստի խմբակը, արվեստի, ինֆորմատիկայի և ռազմագիտության կաբինետները ուսումնական գործունեությունը դարձնում են առավել արդյունավետ, խմբակին ակտիվորեն մասնակցում են ինչպես տարրական, այնպես էլ միջին դպրոցի սովորողները»:*

*Տնօրեն*

*«Դպրոցում գործում է միայն կարատեի խմբակը, որին աշակերտները սիրով հաճախում են: Շատ կցանկանայինք, որ խմբակները ավելանային, այդ մասին էլ ենք անհանգստանում: Երևի սեպտեմբերից արդեն կունենանք խմբակներ: Նշեմ նաև, որ ունենք կարի մեքենայի խնդիր, որոշել էինք, որ էկո պայուսակների արտադրանք սկսենք ԱԽ-ի հետ միասին: Լաբորատորիաների խնդիր կա, գրադարանում գեղարվեստական գրքերի պակաս ունենք, շատ թերի բաներ կա, որոնց կարելի է ուշադրություն դարձնել»:*

*ԴԱԿ*

*«Գործում են միայն արտադասարանական խմբակերը: Գործում են Արմաթի, գորգագործության, ազգային երգի ու պարի խմբակները»:*

*Տնօրեն*

*«Չկան աշակերտների կողմից ստեղծված ակումբեր և միավորումներ: Դպրոցի ողջ գործընթացն համագործակցային է, անգամ ակումբների չլինելու դեպքում առաջարկները համագործակցության արդյունքում իրականացվում են»:*

*Տնօրեն*

*«Աշակերտների կողմից ստեղծված ակումբներ չկան, սակայն այդ ուղղությամբ մտածում ենք ու սկսել ենք աշխատանք տանել, հավանաբար եկող ուսումնական տարվանից կունենանք ակումբներ»:*

*Տնօրեն*

ԱԽ-ն ի թիվս այլնի, արձագանքում և իր իրավասությունների սահմաններում ընթացք է տալիս նաև սովորողների անհատական և կոլեկտիվ առաջարկներին ու դիմումներին, աշխատանքներ է տանում սովորողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ: Հետազոտությունը ցույց է տվել, որ ԱԽ-ն սովորողներից գրավոր և բանավոր առաջարկներ կամ բողոքներ ստանալու դեպքում քննարկում է դրանք իր նիստում և ձեռնարկում համապատասխան քայլեր: Առաջարկներն առավելապես կապված են լինում միջոցառումների կազմակերպման և գույքի ձեռքբերման հետ, որոնք հետագայում ներկայացվում են տնօրենին: Հաճախ ԱԽ նիստում քննարկման առարկա են դառնում նաև աշակերտների միջև, կամ աշակերտների և տնօրենության միջև միջանձնային հարաբերությունները:

Հաշվի առնելով գրեթե բոլոր դպրոցների ԱԽ-ներում մասնագիտացված հանձնախմբերի առկայությունը, օրինակ՝ ուսումնադաստիարակչական, կարգապահական, իրավական, այս խնդիրների քննարկման և լուծման իրավասությունը պատկանում է նաև ԱԽ-ներին, չնայած այն հանգամանքին, որ դրանց ուսումնասիրության և աջակցության տրամադրման օրենքով

սահմանված պարտականություններ ունեն նաև դպրոցի ՄԿԱԳ-ը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը և այլն:

*«Աշխատում ենք չլինեն խնդրահարույց հարցեր, օրինակ՝ մի քանի հոգով մեկին նեղացնեն կամ էդպես մի բան, բայց եթե նկատում ենք, արագ լուծում ենք տալիս: Մարդիկ ունեն շահեր և իրավունքներ, մարդիկ իրար հավասար են անկախ խավից, ունեցվածքից, անկախ ամեն ինչից: Ցանկացած մարդու շահերը պետք է պաշտպանվի: Եթե մարդկանց շահերը չեն պաշտպանվում, գործում է արդեն ինքնապաշտպանական բնազդը: Մարդիկ կան, որոնք տարբեր ձև են այդ ինքնապաշտպանողական բնազդը արտահայտում: (Խնդիր լինելու դեպքում՝ շահերի պաշտպանված չլինելու) տղաները բոլորն էլ կխառնվեն, որոնք սիրում են մարդկանց՝ թույլի շահերը պաշտպանել, դրա համար մեր դպրոցում դա չի լինի: Մենք նաև հարցազրույց էինք կազմակերպել, որտեղ հարցերից մեկը կոնկրետ երեխաներին էր վերաբերվում, թե արդյոք նրանք ճնշվում են աշակերտների կամ ուսուցիչների կողմից: Այդ դեպքերին մենք որոշեցինք Ախ-ով լուծում տալ: Հարցազրույցը անանուն էր (նշվում էին միայն դասարանը և սեռը), ու ոչ մեկ չգիտեր, ով ինչ պատասխան էր նշում: Հարցերի մեջ կային նման կետեր. «Հաճույքո՞վ եք հաճախում դպրոց, դասարանցիների հետ նորմա՞լ եք շփվում, թե՝ ոչ, հարաբերությունները նորմա՞լ են, թե՝ ոչ»: Դրանով փորձում էինք պարզել, թե դպրոցում աշակերտների և ուսուցիչների հարաբերություններն ինչպիսին են, դասարանցիների հետ՝ ինչպիսին»:*

<u>*Ախ անդամներ*</u>

*«Սկզբնական շրջանում առաջնային հարցը մեզ մոտ դրվեց կարգապահությունը: Ախ-ով կարգապահությունը սահմանեցինք, բայց այդ ընթացքում և մինչև այդ շատ երեխաներ հարցերով մոտեցան մեզ, ու մենք նրանցից յուրաքանչյուրի կարծիքը հաշվի առանք և կատարեցինք նրանց ցանկությունները: Հետաքրքիր որոշումներ ենք կայացրել նաև տոների և միջոցառումների հետ կապված»:*

<u>*Ախ անդամներ*</u>

*«Ամենատարածված խնդիրը բուլլինգն է, այսինքն՝ մի անձի կողմից մյուս անձին նվաստացնելը, որոշ դպրոցներում, ինչու չէ նաև այս դպրոցում հնարավոր է լինեն դեպքեր, որի ժամանակ կարող է բուլլինգի զոհ լինել ինչ-որ արատավորումով ծնված երեխա, (մտավոր հետամնացություն): Բուլլինգի պատճառը բուլի անողի դաստիարակության պակասն է և իրենց աշխարհայացի տեսակետը. իրենց ավելի բարձր են գնահատում: Բայց նրանք կուղղվեն այն դեպքում, երբ զգան բուլլինգի համը: Նախանձում են, դրա համար հալածում են: Հենց մեր դասարանում խնդիր է եղել տղաների վարքագծի հետ կապված, միանգամից դիմել ենք Ախ ներկայացուցչին: Նման դեպքերում նա քննարկում է մնացածի հետ, փորձում է տեղյակ պահել կազմակերպչին, որն էլ միջամտում է»:*

<u>*Ախ-ում չընդգրկված աշակերտներ*</u>

*«Այո, դիմել են: Միջոցառումների ժամանակ աշակերտական խորհուրդը նույնպես իր ներդրումն ունեցել է, կարողացել ենք դասարանական միջոցառումներին օգնել, թեկուզ երաժշտական գծով կարողացել ենք օգնել: Գոհ ենք արդյունքից»:*

<u>*Ախ նախագահ*</u>

*«ԱԽ-ին առաջարկել ենք ֆուտբոլի մրցաշար, ինտելեկտուալ խաղ-ցերեկույթ կազմակերպել ու դրանք կյանքի են կոչվել խորհրդի միջոցով»:*

*ԱԽ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Գրավոր չի եղել, բանավոր եղել է: Առաջարկ է եղել ցուցահանդես կազմակերպելու ու կազմակերպել ենք, առաջարկ է եղել գնալ ժամանակակից արվեստի թանգարան, դա էլ ենք կյանքի կոչել»:*

*ԱԽ անդամներ*

*«Իմ դասարանից առաջարկ եղել է ու ես այդ մասին տեղեկացրել եմ տնօրենին: Առաջարկը եղել է համակարգիչների ծեռքբերման հետ կապված, թեպետ այս ընթացքում երկու համակարգիչ ծեռք բերվել է»:*

*ԱԽ նախագահ*

ԱԽ-ն աջակցում է նաև հաստատության կառավարման խորհրդի, մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի և տնօրինության կողմից սովորողներին անմիջականորեն վերաբերող այլ աշխատանքների իրականացմանը, իրականացնում է դպրոցի և օրինակելի կանոնադրությունից բխող այլ լիազորություններ: Աշակերտական խորհուրդը առաջարկություններ է ներկայացնում հաստատության տնօրինությանը՝ հաստատության ներքին կարգապահական կանոնների, սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման, հաստատության և ընտանիքի կապի ամրապնդման, դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, կարգապահության բարելավման վերաբերյալ: Սակայն, սույն հետազոտությունը ցույց է տվել, որ շատ դպրոցներում աշակերտական խորհուրդները չեն դիտարկվում որպես հաստատության կառավարման խորհրդին, մանկավարժական խորհրդին, ծնողական խորհրդին աջակցող մարմին:

*«Աշակերտական խորհուրդը չի աջակցում հաստատության կառավարման խորհրդի, մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի և տնօրինության կողմից սովորողներին անմիջականորեն վերաբերող այլ աշխատանքների իրականացմանը: Այս գործընթացների նկատմամբ վերահսկողությունն ու ուղղորդումը չի մտնում իմ գործառույթների մեջ»:*

*ԴԱԿ*

*«Ամեն օր են աջակցում, ցանկացած հարցում իրենք ասում են իրենց կարծիքը, ընդունում ենք այն, քննարկում, քանզի դպրոցի գործունեությունը հենց նրանց համար է: Սա աջակցելու հետ կապված, սակայն աշակերտական խորհրդի նախագահը չի մասնակցում հաստատության մանկավարժական, ծնողական խորհուրդների, դպրոցի կառավարման խորհրդի, տնօրինության աշխատանքներին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Նման դեպքեր չեն եղել, որովհետև մեր դպրոցում խնդիրներ չկան: Ցանկացած խնդրի դեպքում անգամ մտնում են ուսուցչանոց ու բարձրաձայնում ու դա ենթադրում է, որ առանձին մասնակցության կարիք չկա»:*

*Տնօրեն*

*«Ըստ օրենքի պետք է մասնակցեն, բայց երբևիցե չեն մասնակցել, քանի որ իրավիճակն այնպիսին է եղել, որ իրենց մասնակցությունը հարմար չեմ գտել: Ամեն դեպքում,*

*հոկտեմբերից հետո, երբ ինքս եմ արդեն տնօրինում, ես իմ առաջ դրել եմ այսպիսի նպատակ և ծրագիր, որ իրենց ամեն ինչին հաղորդակից եմ դարձնելու, և իհարկե նաև խորհուրդները լսելու, որովհետև մենք շատ բան ունենք սովորելու»:*

*Տնօրեն*

*«Աշակերտական խորհուրդը միշտ աջակցում է մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի և տնօրինության՝ սովորողներին անմիջականորեն վերաբերվող աշխատանքների իրականացմանը: Սակայն խորհրդակցական ձայնի իրավունքով չեն մասնակցում»:*

*Տնօրեն*

*«Անկեղծ ասած կոլեգիալ կառավարման մարմնին դեռ 10 տարվա ընթացքում չի եղել այնպիսի դեպք, որ երեխան մասնակցի, բայց ծնողական խորհրդի և մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցում է: Երբ մենք կազմակերպում ենք «Վերջին զանգի» միջոցառումները, անպայման կոնկրետ ԱԽ-ի երկու ներկայացուցիչներին, ծնողական խորհրդի նախագահին, դասղեկներին ներգրավում ենք: Շատ դեպքերում ես խնդրում եմ դասղեկներին և ծնողներին, որ միջոցառումների մի հատված թույլ տան մշակի երեխան, որ իրենք ներդրում ունենան: Իրենք հետաքրքիր անակնկալ են անում դպրոցին, տնօրինությանը, կամ իրենց դասղեկին»:*

*Տնօրեն*

*«ԱԽ-ն լսում է ընդհանուր դպրոցի աշակերտների կարծիքը, ներկայացնում է իրենց հուզող հարցերը տնօրինությանը, մանկավարժական խորհրդի նիստերին, եթե խոսքը վերաբերում է ուսումնական մասին, մանկավարժական խորհուրդը լսում է: Իսկ եթե խոսքը ֆինանսական աջակցության մասին է, տնօրենը, ընդհանուր բյուջետային քննարկման ժամանակ դնում է այդ հարցերը»:*

*ԴԱԿ*

*«Ես ընդհանրապես համամիտ եմ, որ աշակերտը մասնակցի, բայց ամեն աշակերտ իրավունք չունի մասնակցի: Մենք պիտի նախընտրենք ճիշտ աշակերտի: Ես ընդհանրապես կողմնակից չեմ, որ աշակերտը մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցի: Ես համաձայն եմ, թող ինքը գա, մասնակցի այն պահին, երբ իրեն վերաբերող հարց են քննարկում ու գնա: Իրենք այն փուլին պիտի մասնակցեն, որտեղ իրենց կարիքը կա, ես այդպես եմ մտածում»:*

*Տնօրեն*

*«Եթե ծնողական խորհուրդն ինչ-որ բան է կազմակերպում, դրա մեջ եթե ոչ ամբողջ աշակերտական խորհուրդը, ապա ներկայացուցիչներ անպայման կան: ԱԽ ներկայացուցիչները մասնակցում են նաև կառավարման խորհրդին, ոչ միշտ, անկեղծ ասեմ, որովհետև հարցեր կան, որ իրոք պետք չի որ աշակերտն իմանա, ասենք ֆինանսական հարցեր, ինչ-որ բյուջեի վերաբերվող. ոչ աշակերտին հասանելի է դա, ոչ էլ պետք է, որ աշակերտը իմանա: Բայց կան հարցեր, որոնք եթե վերաբերվում են ԱԽ-ին, անպայման ներկայացուցիչ մենք ունենում ենք»:*

*ՄԿԱԳ*

*«Աշակերտական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական և ծնողական խորհրդի նիստերին, որի կազմակերպումը մտնում է իմ գործառույթների մեջ»:*

*ԴԱԿ*

*«Ախ անդամներն աջակցում են խորհուրդների աշխատանքներին: Հատկապես սովորողների կարգապահության պահպանման, դասարանական միջոցառումների, դպրոցական միջոցառումների, դասարանների ու դպրոցի զարդարման հարցերում իրենց անմիջական մասնակցությունն են ցուցաբերում: Սակայն խորհրդակցական ձայնի իրավունքով չեն մասնակցում»:*

*Տնօրեն*

Ինչպես նշվեց, աշակերտական խորհրդի նախագահը՝ ղեկավարում է խորհրդի գործունեությունը՝ նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, հանդիսանում է սովորողների ներկայացուցիչը հաստատության մյուս մարմինների հետ փոխհարաբերություններում, մասնակցում է հաստատության մանկավարժական, ծնողական խորհուրդների, դպրոցի կառավարման խորհրդի, տնօրինության աշխատանքներին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Հետազոտությամբ որպես ընդգծված բացթողում բացահայտվեց այն, որ Ախ նախագահները գրեթե երբեք չեն մասնակցում մանկավարժական խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, իսկ դպրոցների ՄԿԱԳ-ները և ԴԱԿ-ները հստակ չեն սահմանազատում իրենց լիազորություններն այս հարցում, ինչը հանգեցնում է յուրաքանչյուր իրավիճակում հայեցողական և անհստակ մոտեցման: Մինչդեռ, պետք է նշել, որ օրենսդրությամբ Ախ-ների աշխատանքին աջակցելու և ուղղորդելու հիմնական պարտականությունը պատկանում է ՄԿԱԳ-ին, իսկ ԴԱԿ-ն աջակցում է առհասարակ բոլոր սովորողների պատշաճ վարքագծի, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, աշխատանք է տանում սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը և այլն:

*«Ըստ պաշտոնի մանկավարժական խորհրդի նիստը ղեկավարում եմ ես, որպես նախագահ, բայց չի եղել նման դեպք, երբ խորհրդակցական կարգով Ախ-ի անդամներ ներգրավվեմ, բայց անպայման, մոտ ապագայում կլինի դա, հատկապես ծրագրել եմ, որ կիսամյակների ավարտին Ախ անդամներ ներգրավեմ»:*

*Տնօրեն*

*«Հանդիսանում եմ մանկավարժական խորհրդի անդամ: Նման դեպքեր չեն գրանցվել: Ո՛չ, չի մասնակցում: Այդ գործընթացների նկատմամբ վերահսկողությունն ու ուղղորդումը մտնում է իմ գործառույթների մեջ»:*

*ՄԿԱԳ*

*«Մանկավարժական խորհրդի անդամ եմ: Աշակերտական խորհրդի հարցերը լուծվել են և չի հասել մինչև մանկավարժական խորհրդի նիստերի քննարկմանը»:*

*ԴԱԿ*

*«Մեր գործառույթների մեջ մտնում է, բայց ամեն անգամ չի, որ ԱԽ նախագահը կարող է մասնակցել: Եթե կա լուրջ հարց, որը վերաբերում է ուսումնադաստիարակչական աշխատանքներին, հրատապության հարց է, այո, իրավունք ունի մասնակցելու: Բայց մինչև հիմա այդպիսի լուրջ, ծանր խնդիր չենք ունեցել»:*

*ԴԱԿ*

*«Հաղիսանում եմ մանկավարժական խորհրդի անդամ, սակայն խորհրդի նիստերին աշակերտները չեն մասնակցել»:*

*ԴԱԿ*

*«Նախ իրենք պարտավոր են ներկա լինել, բայց եթե լինում են հարցեր, որտեղ որ առանձնապես աշակերտի ներկայությունը պարտադիր չի, մենք չենք հրավիրում: Բայց եթե մենք քննարկում ենք այնպիսի հարցեր, որը վերաբերում է հենց աշակերտների կարգապահությանը, վարքին, նույնիսկ ընտանիքներում կատարվում են դեպքեր, խիստ անհրաժեշտ է աշակերտի ներկայությունը, որովհետև մենք մինչև լուծում տալը, պիտի նրա կարծիքը լսենք: Միգուցե բաներ կան, որոնցից մենք տեղյակ չենք: Անհատ ձևավորվելու հարցում, աշակերտը պետք է կարողանա ինքնուրույն կարծիք հայտնել: Բա էլ որտեղ տանք հնարավորություն, որ աշակերտը կարողանա իր կարծիքն ասել, թեկուզ՝ թող սխալվի»:*

*Տնօրեն*

*«Այո, եղել է, որ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցեն: Մենք մանկատուն պետք է այցելեինք, աշակերտական խորհրդի գործառույթը եղել է այդտեղ: Մասնակցել են և՛ աշակերտական խորհուրդը, և՛ ծնողական խորհուրդը»:*

*Տնօրեն*

*«Հոգեբանական կաշկանդվածության կա այն առումով, որ աշակերտ է ու դա օբյեկտիվ սահմանափակում է տարիքային առումով մեծերի նկատմամբ հարգանքի տեսանկյունից: Բայց պետք է ինչ-որ քայլեր ձեռնարկել դա հաղթահարելու համար, որպեսզի աշակերտն իմանա, որ ինքը գնում է ոչ թե կոնֆլիկտի մեջ մտնելու, կամ դա ոչ թե հարգանքի բացակայության նշան է, այլ ուղղակի իրենց ձայնը և խնդիրներ են բարձրացվում»:*

*Փորձագետ*

*«Բոլոր երկրներում էլ կրթությունը մշակույթ է, այսինքն՝ դու ինչ մշակույթ որ ունես, այնպես էլ քո կրթական համակարգի դրվածքն է: Մանավանդ եթե այնտեղ աշակերտի հարց է քննարկվում, պատաղիր է, որ երեխեքը մասնակցեն»:*

*Փորձագետ*

Աշակերտական խորհուրդը հաստատության կառավարման խորհրդի և խորհրդակցական մյուս մարմինների հետ համատեղ՝ մասնակցում է սովորողների արտաուսումնական, արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը, մասնակցում է ծնողազուրկ և օգնության կարիք ունեցող երեխաների հաշվառմանը՝ նրանց նյութական և այլ օգնություն ցուցաբերելու աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացում, պաշտպանում է երեխայի իրավունքները հաստատությունում, նպաստում է դպրոցի սանիտարահիգիենիկ

պայմանների պահպանմանը, համագործակցում է դասղեկների հետ՝ դասղեկի աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումներն իրականացնելու համար:

Ինչպես ցույց է տվել հետազոտությունը, ԱԽ գործունեությունը հիմնականում սահմանափակվում է մշակութային (երաժշտագիտական, արվեստաբանական), սպորտային (ֆուտբոլ, սպորտլանդիա) և բնապահպանական (ծառատունկ, կանաչապատում, մաքրման աշխատանքներ) միջոցառումներով, ինչը ևս մեկ անգամ հաստատվեց սույն հետազոտությամբ: Հազվադեպ լինում են նաև գիտական միջոցառումներ: Գրեթե բոլոր դպրոցներում աշակերտների կողմից իրականացված միջոցառումների և նախաձեռնությունների շարքում առանձնակի տեղ է գրավում 2020թ.-ի Արցախյան 44-օրյա պատերազմի արդյունքում վիրավորված կամ զոհված անձանց ընտանիքներին աջակցության տրամադրումը, թեմային նվիրված ուխտագնացությունների և միջոցառումների կազմակերպումը:

*«Մեր մոտ հիմնականում մշակութային ու սպորտային են միջոցառումներ են կազմակերպվում, սակայն լինում են նաև գիտական»:*

*ԱԽ նախագահ*

*«ԱԽ անդամները գիտելիքի օրը, դեկտեմբերի 7-ին նվիրված մոմավառություն, ցուցադրություններ, հաշմանդամության օրը իրազեկման միջոցառումներ կազմակերպեցին, մայրենիի օրը ևս իրազեկում է կազմակերպվել խորհրդի անդամների կողմից, որի միջոցով մեզ քարոզում էին խոսել մայրենի լեզվով: Մարտի 8-ին ևս նկարչության դասերին արված նկարների ցուցադրություն, ձեռքի աշխատանքների ցուցահանդես կազմակերպեցին միջանցքում: Անդամները յուրաքանչյուր միջոցառման համար մեծ իրազեկող պաստառ են փակցնում, որով մենք տեղեկանում ենք սպասվելիք միջոցառման մասին: Հովհաննես Թումանյանի ծննդյան օրվան ընդառաջ Թումանյանական անկյուն էին ստեղծել: Նրանց կատարած միջոցառումների մասին անվերջ ակերելի է խոսել:Այսօր Աուտիզմի իրազեկման օրն էր ու նրանք իրազեկման միջոցառումներ էին պատրաստել, խորհրդին համապատասխան գույնով՝ կապույտ փուչիկներ օդ բաց թողեցին»:*

*ԱԽ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Աշակերտական խորհուրդը նախաձեռնել է նկարչական աշխատանքների ցուցադրություն, սպորտլանդի ու մենք սիրով մասնակցել ենք»:*

*ԱԽ-ում չընդգրկված աշակերտներ*

*«ԱԽ-ն շատ միջոցառումներ է կազմակերպում դպրոցում՝ երաժշտական, արվեստագիտական, տարբեր առումներով ամեն տոնին: Դպրոցի ներսում աղբամաններ են տեղադրում, դպրոցի բակում պատրաստել են նստարաններ, իսկ դպրոցից դուրս, համայնքում ծառատունկի են մասնակցել: Մասնակցել են տարբեր մրցույթների և հաղթել և այդպիսով մեր դպրոցը գրավել է պատվավոր տեղեր: Բացի սպորտայինից, նաև մասնակցել են Քովիդի վերաբերյալ ԿԳՄՍՆ մրցույթին և հաղթել՝ արժանացել պատվոգրի և նվերի»:*

*ԱԽ-ում չընդգրկված աշակերտներ*

*«Անցյալ տարի դրսում դրել ենք նստարաններ, որոնք, իրոք կարևոր են, ծառատունկ-կանաչապատում ենք իրականացրել, բացի դրանից դպրոցի ներսում միջոցառումներ են կատարվել բանակի տոնի, աշնան վերաբերյալ, ուսուցիչների տոնին նվիրված, բաց դասեր էլ են եղել, դասախոսություններ են կատարվել: Դասախոսություններն եղել են մեդիագրագիտության, երկրաշարժերի, թմրամոլության վերաբերյալ: Կազմակերպել ենք մոմավառություն 44-օրյա պատերազմի, Եղեռնի համար: Անցյալ տարի մասնակցել ենք "Սպորտային սերունդ" մրցույթին, որում հաղթել ենք, շուտով սպասում ենք գույքին: Ներկայացրել ենք տեսահոլովակ, դպրոցի դահլիճի ընդհանուր տեսքի մասին, թե ինչքան վատ իրավիճակում է գտնվում, ու թե ինչքան են դպրոցի երեխեքը ձգտում այդ սպորտային մրցույթների մասնակցել, որի հնարավորություն չկա: Նաև այս տարի մասնակցեցինք Աբովյանի 2-րդ դպրոցում տեղի ունեցած "Սասունի արծիվ" 2022 թ. 2-րդ մրցույթին ու ստացել ենք պատվոգրեր: Քովիդ-19-ի վերաբերյալ տեսանյութեր են նկարահանվել բարձր դասարանցիների կողմից ու գրավել ենք բարձր տեղ: Ստացել ենք դիպլոմներ և նվեր (ԿԳՄՍՆ մրցանակ): Բացի դրանից «Կրեատիվ տոնածառ» մրցույթ է իրականացվել, ավելի հետաքրքիր է դարձել տոնական տրամադրությունը»:*

<u>*ԱԽ նախագահ*</u>

*«Արցախցիներին ենք օգնել, պատերազմի ժամանակ զինվորներին, միջոցառումներ ենք իրականացրել: Անցյալ տարի ունեցել ենք ևս մեկ միջոցառում, որում համագործակցել ենք մեր զոհված հերոսներից մեկի ծնողների հետ և արդյունքում կազմակերպել էինք մեծ միջոցառում,որին մասնակցել էր նաև ԱԽ-ն, ներկայացրել էինք այդ զինվորի գրքի շնորհանդեսը: Բացի դրանից մենք նաև համագործակցում ենք այլ դպրոցների հետ, օրինակ ես ինքս մասնակցել եմ Սիսավանում անցկացվող "Ուսուցչի կերպարը" հոգեբանական թրեյնինգին, և ինձ շատ դուր է եկել այնտեղի միջավայրը, կարծում եմ, որ այդպիսի թրեյնինգներ շատ հաճախ պետք է անցկացվեն, հենց աշակերտների, ինչու չէ նաև ուսուցիչների համար: Նաև կամավորական աշխատանքներ ենք իրականացրել դպրոցում և դպրոցից դուրս, աղբահանում, շաբաթօրյակներ ենք կազմակերպել, և ծառատունկ, ոչ միայն ավագ դասարանների հետ, այլ նաև փոքր դասարանի աշակերտների հետ, դրսում կարող եք տեսնել: Հիմնականում բնապահպանական, կամավորական աշխատանքներ ենք տարել, մշակութային, և ինչու չէ նաև սպորտլանդիաներ»:*

<u>*ԱԽ անդամներ*</u>

*«Հիմնականում դպրոցի ներսում, նաև դպրոցից դուրս այլ համայնքների հետ էլ ենք համագործակցել: Օրինակ՝ մի տարի առաջ համագործակցեցինք Սիսավանի դպրոցի հետ: Հոգեբանական զրույց էր տեղի ունեցել և ԱԽ-ի մի քանի անդամներ ներկա են եղել այնտեղ և շատ հետաքրքիր զրույց էին անցկացրել: Ընդհանրապես դպրոցի ներսում ենք շատ միջոցառումներ կազմակերպում, հիմնականում ուսուցողական, սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ»:*

<u>*ԱԽ նախագահ*</u>

*«Գործող նախագահի աշակերտական խորհրդի գործունեության ծրագրում, օրինակ՝ դրույթ կար ֆուտբոլի մրցաշարի կազմակերպման, որն արդեն իրակացվել է, դրույթ կար նաև տոները որպես միջոցառում մեծ շուքով նշելու ու նա նախաձեռնեց Տյառնընդառաջի*

*մեծ ու գեղեցիկ միջոցառումը: Հիմա նախաձեռնել է Զատիկ տոնի կազմակերպչական աշխատանքները»:*

*Ախ անդամներ*

*«Մենք սեպտեմբերից մինչ այսօր բոլոր տոները նշել ենք, միջոցառումներ ենք կազմակերպել, մոմավառություն, մենք անգամ Եղիշե Չարենցի ծննդյան առթիվ պլակատներ ենք սարքել, քվեարկություն ենք կազմակերպել: Մենք ուշադրություն ենք դարձրել հիմնականում տոներին և փորձել ենք մեծ հարցը դնել և փորձել պատասխանել այն հարցին, թե «Ինչքան հայ ենք մենք»: Մենք շատ երթեր ենք կազմակերպել, առաջին կիսամյակում գնացել ենք նաև ապրիլյան հերոսամարտերի ժամանակ զոհված մեր Վեդիի հայ տղաների ընկերներին, այցելել ենք նաև եկեղեցի, ուխտագնացություն ենք կազմակերպել: Մեր դպրոցը երբեք չի մոռանում զոհված տղերքին, քանի որ նրանք մեր համար են զոհվել, ու նրանց շնորհիվ է, որ մենք հենց հիմա այստեղ նստած ենք ու հարցազրույցի ենք մասնակցում, դրա համար մենք նրանց առաջ միշտ խոնարհվում ենք ու մոմավառություն ենք կազմակերպում ու միշտ իրենց հիշում ենք: Պատերազմի ժամանակ նաև օգնություն ենք ուղարկել զինվորներին»:*

*Ախ անդամներ*

*«Բոլոր տոներին Ախ-ը ակտիվ է եղել: Ներկայացնեմ մեր մի քանի միջոցառումները. պահքի համար դպրոցի Հայոց եկեղեցու պատմության ուսուցչի հետ քննարկումներ կատարեցինք, և 6-րդ դասարանցիներն ու 7-րդ դասարանցիները Ախ-ի գլխավորությամբ փոքրիկ միջոցառում կազմակերպեցին: Հովհաննես Թումանյանի, Սուրբ Սարգսի տոնի համար մեր դպրոցի «Իսկ դու գիտես» անկյունում պատրաստվել են տարբեր պաստառներ և տեղեկություններ տեղադրվել: Շատ երեխաներ, ովքեր ընդգրկված են կամ ընդգրկված չեն Ախ-ում, խորհուրդ են տալիս սպորտային միջոցառումներ: Հայրենասիրության համար դեռ չենք արել, բայց ապրիլի 24-ին կունենանք միջոցառում: Դպրոցում տեղի է ունենում մոմավառություններ և հիմնականում մայիսի 18-ին համայնքի հետ գնում ենք հուշարձաններ, և մեր հարգանքի տուրքն ենք մատուցում»:*

*Ախ նախագահ*

*«Գարնան տոնին նվիրված միջոցառում ենք կազմակերպել, յուրաքանչյուր եղանակին համապատասխան ձևավորել ենք միջանցքները, աշնան տոն ենք արել, զոհերի հիշատակի միջոցառում»:*

*Ախ անդամներ*

*«Երբ որ նայում ենք Ախ-ի օրինակելի կանոնադրությունը, այն առաջին հերթին սովորողների շահերի պաշտպանության, աջակցության համար է: Բայց քանի որ և՛ աշակերտները, և՛ ուսուցիչները տեղեկացված չեն, այսինքն՝ քչերն են բացում, կարդում կանոնադրությունը, ծանոթանում, օրենքը նայում, ավտոմատ իներցիոն կերպով գնում են նրան, որ, եթե դպրոցում ինչ-որ բան է պետք անել, դա մշակութային, հայրենասիրական միջոցառումն է: Պետք է իրազեկել, ու բացի իրազեկելը նաև անընդհատ հիշեցնել, սովորացնել, հորդորել, որ խորհրդի նպատակը այլ է»:*

*Փորձագետ*

*«Չպետք է լինեն միայն միջոցառումներ: Հիմա դա էլ է շատ տարածված դպրոցներում, երբ կազմակերպվում է սպորտլանդիա: Շատ լավ է, ես դեմ չեմ, բայց դա հիմնական մշակույթ փոխող մի բան չի»:*

*Փորձագետ*

Ըստ գործող իրավակարգավորումների՝ աշակերտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստեր հրավիրվում են աշակերտական խորհրդի նախագահի, տնօրենի, տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի նախաձեռնությամբ և (կամ) աշակերտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով և հաստատության սովորողների ընդհանուր ժողովի որոշմամբ: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության անցկացման կարգը (փակ կամ բաց) որոշում է աշակերտական խորհուրդը: Հավասար թվով ձայների դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

Աշակերտական խորհրդի նիստերը արձանագրվում և հրապարակվում են աշակերտական խորհրդի որոշման համաձայն: Հետազոտությունը ցույց է տվել, որ աշակերտական խորհրդի հերթական նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Որոշ դպրոցներում դա կազմակերպել է ԴԱԿ-ը, մասնակցել է նաև տնօրենը: Արտահերթ նիստերը տեղի են ունեցել տնօրենի նախաձեռնությամբ՝ աշակերտական խորհրդի նախագահի պարտականությունների թերացման, սովորողների կարգապահության կապակցությամբ, ՄԿԱԳ-ի կողմից հրավիրվել է ԱԽ նիստ՝ կորոնավիրուսի և պատերազմի հետ կապված:

*«Ամիսը մեկ մեր ԴԱԿ-ը կազմակերպում է, անում է, ես շատ հաճախակի կողքից, կարող է 10 րոպեով մտնեմ, մասնակցեմ, բայց իրենք հասկանան, որ ես իրենց հետ եմ: Արտահերթ նիստերի առիթ չեմ ունեցել, որովհետև առիթը պիտի լինի կարգապահությունը, հագուկապը, չսովորելը: Դրանք այնպիսի ամենօրյա հարցեր են, որ մենք առանց արտահերթ նիստի կարգավորում ենք»:*

*Տնօրեն*

*Նիստերը գումարվում են ամիսը մեկ անգամ, կարող է նաև արտահերթ նիստ գումարվել: Նիստերը պարտադիր արձանագրվում են:*

*ԱԽ անդամներ*

*Նիստերը գումարվում են ամիսը մեկ անգամ, բայց դեպքեր են լինում, որ արտահերթ էլ լինում:*

*ԱԽ նախագահ*

*«Աշակերտական խորհրդի նիստերը գումարվում են ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստ ունեցել ենք տնօրենի նախաձեռնությամբ՝ աշակերտական խորհրդի նախագահի պարտականությունների թերացման հետ կապված»:*

*ՄԿԱԳ*

*«Աշակերտական խորհրդի նիստերը գումարվում են ամիսը մեկ անգամ պարբերականությամբ: Մեկ անգամ իմ կողմից հրավիրվել է արտահերթ ժողով. օրակարգում սովորողների կարգապահական հարցերն էին»:*

*Տնօրեն*

*«Ախ արտահերթ նիստեր եղել են, աշակերտներն են ինձ դիմել այն հարցով, որ ուզում են շատ արագ կանաչապատման հետ կապված հարցեր քննարկել: Մեկ այլ դեպքում երեխաներից մեկը ոստիկանությունում էր, նրա գործն էր քննվում և իմ նախաձեռնությամբ դա քննարկվել է երեխաների հետ, քանի որ այդ երեխային պետք է տրվեր նկատողություն, ինչին պետք է տեղյակ լիներ նաև Ախ-ն»:*

<u>*Տնօրեն*</u>

*«Ախ նիստերը մենք անցկացնում ենք ըստ օրակարգի, ամիսը մեկ անգամ: Հրատապ նիստ եղել է Կովիդի և պատերազմի հետ կապված»:*

<u>*ՄԿԱԳ*</u>

*«Ախ նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ, հաճախ լինում են, որ արտահերթ նիստեր ենք ունենում: Հաճախ լինում է, որ Ախ նախագահն ինքն է արտահերթ նիստեր հրավիրում ինչ-որ արտառոց դեպքերի հետ կապված, աշակերտների վարքի, ուշացումների հետ կապված, սանիտարական վիճակի հետ կապված: Եղել են, որ ես ինքս եմ հրավիրել արտահերթ նիստեր՝ կապված միջոցառումների, վիկտորինաների, էքսկուրսիաների հետ կապված»:*

<u>*ԴԱԿ*</u>

Աշակերտական խորհրդի գործունեությունը օրինակելի կանոնադրության համաձայն կազմակերպելու նպատակով ստեղծվում են համապատասխան մասնագիտացված հանձնախմբեր, որոնք իրենց կազմից ընտրում են հանձնախմբի համակարգող: Մասնագիտացված հանձնախմբերը կազմավորվում են ըստ գործունեության բնագավառների (ուսումնադաստիարակչական, ռազմամարզական, առողջապահական, սոցիալական, մշակութային, կարգապահական, իրավական, տեղեկատվական և այլն): Մասնագիտացված հանձնախմբերի պարտականություններն ու լիազորությունները սահմանվում են աշակերտական խորհրդի կողմից: Հանձնախմբերի կազմում աշակերտական խորհրդի առաջարկությամբ կարող են ընդգրկվել նաև ուսուցիչներ, ծնողներ և համապատասխան բնագավառների մասնագետներ: Ուսումնասիրված դպրոցներում աշակերտական խորհուրդներում՝ գործունեությունը օրինակելի կանոնադրության համաձայն կազմակերպելու նպատակով ստեղծվել են հիմնականում սպորտի, ռազմամարզական, մշակույթի, ԶԼՄ (տեղեկատվական), կարգապահական, ուսումնադաստիարակչական, սանիտարահիգիենիկ, կազմակերպչական և այլ հանձնախմբեր:

*«Հանձնախմբերը շատ ողջունելի են, երեխաներն իրենք են նախաձեռնում, իրենք էլ լավ աշխատում են: Ինչն իրենք են ստեղծում, լավ փայփայում են: Ունենք տեղեկատվական-լրատվական, որն առկա է, և դուք էլ կարող եք տեսնել, ամեն անգամ թարմացնում են: Իրավաբանական հանձնախումբ ունենք, որտեղ պաշտպանվում են սովորողների շահերը, ներկայացնում են իրենց խնդիրները: Հասարակագիտության թեմային առնչվող բանավեճեր են եղել: Լրատվության հանձնախմբի առաջարկով սոցմանկավարժի և հոգեբանի աջակցությամբ թեստեր են հրապարակվել, և երեխաները իրենց հուզող թեմաների շուրջ քննարկումներ են անցկացրել, եզրահանգման ենք եկել, շտկել ինչ-որ*

*կարող ենք: Երեխաները սիրում են միանալ և՛ այն հանձնախմբերին, որոնք ակտուալ են, և՛ նրանց, որոնք իրենց նախասիրությունների սահմաններում են»:*

*<u>ԴԱԿ</u>*

*«Ունենք խումբ, որը զբաղվում է միայն տեղեկատվությամբ: Մենք կարծեմ 2-3 շաբաթ առաջ ունեցանք հարցազրույց և բոլոր դասարանցիների հետ բուլինգի մասին հաղորդում նայեցինք, և բուլինգի մասին հետաքրքիր հարցազրույց ունեցանք ամեն դասարանից 50 տոկոս երեխաների հետ»:*

*<u>Ախ անդամներ</u>*

*«Մեր Ախ-ն, եթե չեմ սխալվում, չորս հանձնախումբ ունի, սպորտի, մշակույթի, ՉԼՄ և կարգապահական: Ուրեմն այդ 4 հանձնախումբն էլ այնքան ոգևորված են, մի տեսակ մրցույթ կա 4 հանձնախմբի միջև, ով պիտի հաղթող ճանաչվի, ով պիտի ավելի շատ աշխատանք ներկայացնի, ամեն ամիս մենք Ախ նիստերի ժամանակ քննարկում ենք իրենց աշխատանքները, լինի դա ռեֆերատային աշխատանք, լինի տեղեկատվության հավաքում, անկյուններ ունենք լուսաբանման համար: Ակտիվություն, ներգրավվածություն. որտեղ կա մրցույթ, այնտեղ «իրար գլուխ են ջարդում»»:*

*<u>ՄԿԱԳ</u>*

*«Աշակերտների կողմից դպրոցում ստեղծվել են՝ ուսումնադաստիարակչական, ռազմամարզական, սանիտարահիգիենիկ, կազմակերպչական հանձնախմբեր»:*

*<u>ՄԿԱԳ</u>*

Ուսումնասիրված դպրոցներում Ախ նախագահները համակարգել են դասարանական խորհուրդների և հանձնախմբերի գործունեությունը և փորձել ապահովել դասարանական խորհուրդների և հանձնախմբերի միջև համագործակցությունը, դասարանական և աշակերտական խորհուրդներում չընդգրկված սովորողների ընդգրկվածությունը:

*«Չնայած նրան, որ կան այնպիսի աշակերտներ, որ Ախ- ի մասը չեն կազմում, բայց ինչ-որ նոր բաներ որոշելուց կամ կազմակերպելուց մենք նաև լսում ենք իրենց կարծիքը, և եթե նրանք ցանկություն ունեն մասնացելու միջոցառմանը, ապա մենք հաշվի չենք առնում այն փաստը, որ նրանք Ախ-ից չեն, նրանք ևս կարող են ինչ-որ մասնակցություն ցուցաբերել, կամ թեկուզ մասնակցել Ախ-ի էքսկուրսիաներին:*

*<u>Ախ անդամներ</u>*

*«Ունենք 3 հանձնախումբ՝ բնագիտական, մշակութային ու սպորտային ու բնականաբար դասարանական խորհուրդների հետ համագործակցում ենք: Դասարանական խորհուրդների առաջարկով երկու միջոցառում ենք կազմակերպել»:*

*<u>Ախ անդամներ</u>*

*«Քանի որ Ախ-ում գտնվող աշակերտներից բոլոր դասարաններում կան, երբ որ մենք Ախ նիստի ժամանակ ինչ-որ հարցեր ենք քննարկում, ինչքան էլ որ ցածր դասարանի երեխաները տեղյակ չեն լինում դրանցից, մենք բոլոր դասարաններով շրջում ենք, բոլորին*

*տեղեկացնում, բոլորն էլ տեղյակ են լինում ու իրենց նախաձեռնությունն ունենում այդ գործի մեջ»:*

<u>*Ախ նախագահ*</u>

*«Բնույթով ակտիվիստ եմ ու նաև դասարանի ավագը: Համագործակցում եմ բոլոր դասարանական խորհուրդների հետ, լսում առաջարկությունները, խնդիրները, դրանք ներկայացնում աշակերտական խորհրդի նիստում և լուծումներ տալիս»:*

<u>*Ախ նախագահ*</u>

*«Մենք ունենք հանձնախմբեր և նրանք պարտադիր մասնակցում են նիստերին: Ախ յուրաքանչյուր անդամ իր դասարանի հետ խորհրդակցելով այդ հարց բերում է, բոլորով քննարկում ենք և լուծում ենք տալիս»:*

<u>*Ախ նախագահ*</u>

Գործող իրավակարգավորումներին համապատասխան Ախ նախագահը տարեկան հաշվետվություն պետք է ներկայացնի սովորողների ընդհանուր ժողովին՝ աշակերտական խորհրդի և իր կատարած աշխատանքների մասին: Հետազոտությունը ցույց է տվել, որ այդ գործառույթը պատշաճ իրականացվում է Ախ նախագահների կողմից, դեռ ավելին, այն իրականացվում է առավել մեծ հաճախականությամբ, քան օրենսդրի պահանջն է՝ ամեն կիսամյակ, ամեն Ախ նիստին և այլն:

*«Ներկայացնում եմ հաշվետվություն մի կիսամյակի կտրվածքով, թե ինչ միջոցառումներ ենք կազմակերպել, ինչքան ենք նիստ գումարել, նիստերի ժամանակ ինչ ենք քննարկել»:*

<u>*Ախ նախագահ*</u>

*«Գրեթե բոլոր Ախ նիստերի ժամանակ հաշվետվություններ ենք ներկայացնում ԴԱԿ-ին բանավոր կերպով»:*

<u>*Ախ նախագահ*</u>

*«Հաշվետվությունները, հիմնական մեր արած գործերը ներկայացնում եմ ԴԱԿ-ին, նիստերից հետո, ամեն ամիս»:*

<u>*Ախ նախագահ*</u>

Աշակերտական խորհուրդների գործունեության վրա ազդող դրական գործոն է նաև դպրոցների և ՀԿ-ների միջև համագործակցությունը: Հետազոտությունը ցույց է տվել, որ դպրոցներում խնդրահարույց է Ախ-դպրոց-ՀԿ համագործակցության թեման: Ըստ աշակերտների և տնօրենների, ՀԿ-ները պետք է գտնեն իրենց, քանի որ ՀԿ-ներին գտնելն առավել դժվար է և պահանջում է լրացուցիչ մեդիագրագիտություն: Դպրոցներից շատերն ունեցել են ՀԿ-ների հետ հաջողված համագործակցության փորձ, սակայն ներկայումս չեն կարողանում գտնել և կապ հաստատել նմանատիպ ՀԿ-ների հետ: Այս հարցում առաջացել է անջրպետ դպրոցների և ՀԿ-ների միջև:

*«Ես չեմ համագործակցում ՀԿ-ների հետ: Ինձ թվում է, շատ ճիշտ կլինի, որ ՀԿ-ները գան և փնտրեն դպրոցը, և ԴԱԿ-ը, ՄԿԱԳ-ը և Ախ-Ն համագործակցեն: Միաժամանակ նշեմ, որ մենք համագործակցել ենք շվեդական կազմակերպության հետ, որպեսզի վերջ տանք*

*բուլլինգին մեր դպրոցում: Ասեմ, որ այնպիսի դպրոց, այնպիսի տեղ չկա, որ բուլլինգ չլինի: Կոնկրետ մեր դպրոցում ավելի շատ ոչ թե բուլլինգ է, այլ մարդու իրավունքները հաշվի չեն առնում: Աշակերտներին կարող են լավ սովորելու համար քմծիծաղ տալ, որն իհարկե աշակերտներին դուր չի գալիս: Ծվեդական կազմակերպության հետ համագործակցելուց հետո շատ մեծ փոփոխություններ եմ նկատում:*

<u>*Ախ նախագահ*</u>

*«Երբ որ մենք սկսեցինք համագործակցել մի շարք բնապահպանական կազմակերպությունների, հիմնադրամների հետ՝ «Կանաչ դպրոց» հիմնադրամն էր, «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության» հիմնադրամը, «Կլիմայական արկղիկ»-ը, որտեղ նույնիսկ մեր երեխային ՄԱԿ-ի գրասենյակ են հրավիրվել, (երեխան ներկայացրել էր իր տեսաֆիլմը), «Էյ Թի Փի», ինչպես նաև «Ուրբան» հիմնադրամի հետ ենք ունեցել համագործակցություն, այս ամեն ինչը նպաստեց, որ երեխաները առաջարկեցին, որ պիտի ունենան բնապահպանական ակումբ: ՀԿ-ների հետ բավականին ակտիվ մասնակցություն ունենք, օրինակ՝ «Համալսարանական կրթությամբ կանանց» ասոցացիային ես եմ հրավիրել: Իրենք փոքր ֆոկուս խմբերով են աշխատել և դա նաև հիմք է, որ անպայման տարբեր տարիքային խմբերի դասարանների դասղեկներ մասնակցեն, և եթե տարիքին համապատասխանում է, մենք նաև դա անում ենք մեր դասարաններում: Համագործակցել ենք «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի հետ. հիմնականում գենդերային հարցեր են տրվել երեխաներին, խաղեր էին կազմակերպում, շատ հետաքրքիր էր: Ինձ թվում է պիտի երկկողմանի լինի, և մենք գտնենք ՀԿ-ներին, և իրենք մեզ գտնեն, երկու դեպքում էլ համագործակցությունը կարող է արդյունավետ լինել:»:*

<u>*Տնօրեն*</u>

*«Չենք համագործակցել: Այդ ժամանակ, իհարկե, պետք է գալիս մեդիագրագիտությունը, որպեսզի կարողանանք գտնել տվյալ կազմակերպությունը: Հասարակական կազմակերպությունը չի կարող իմանալ, թե այդ դպրոցը ինչ վիճակում է, պետք է դպրոցը գնա և դիմի»:*

<u>*Ախ-ում չընդգրկված աշակերտներ*</u>

*«Ունենում ենք մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ: Յուրաքանչյուր ամիս, ըստ իմ զարգացման ծրագրի հրավիրում եմ մասնագետներ տարբեր ոլորտներից: Մասնագետները 9-12-րդ դասարանի աշակերտների հետ ունեցել են հանդիպումներ: Փաստաբան ենք ունեցել՝ «Գալիլյան» փաստաբանական գրասենյակից, Հ1-ից ունեցել ենք լրագրող, բժիշկ ենք ունեցել ամբուլատորիայից, ով զրուցել է աշակերտների հետ, ոստիկան ենք ունեցել, մանկավարժներ ենք ունեցել այլ դպրոցներից և հետագայում նաև այլ մասնագետներ ենք պատրաստվում հյուրընկալել: Իմ ցավոտ հարցերից մեկը, եկած օրվանից այն է, որ փորձում եմ ՀԿ-ների հետ լեզու գտնել և համագործակցել: Սակայն տարածքը, քանի որ բավականին հեռու է կենտրոնական վայրերից, Վեդի համայնքից, Արարատից, Արտաշատից, ՀԿ-ներն էլ հիմնականում քաղաքներում են լինում, ամեն դեպքում չեմ համագործակցում ոչ մեկի հետ, բայց դիմել եմ որոշ ՀԿ-ների»:*

<u>*Տնօրեն*</u>

*«Ցավոք, ոչ մի հասարակական կազմակերպություն չի դիմել մեզ, մենք էլ ոչ մեկի տեղը չգիտենք: Չգիտենք ինչպես կարող ենք համագործակցել: Եթե տեղը իմանանք, իմանանք*

*ինչով են զբաղվում, մենք սիրով կդիմենք իրենց, սիրով կցանկանանք օգնել իրենց, աջակցել, մասնակցել իրենց կազմակերպած միջոցառումներին»:*

*<u>ՄԿԱԳ</u>*

*««Բարձրունք» ՀԿ-ի հետ ՏՀՏ ոլորտում մասնագիտական կողմնորոշման դասընթաց ենք ունեցել ձմռանը, որի ընթացքում մենք բավականին նոր գիտելիքներ ունեցանք: Տարբեր տարիքի երեխաներ կային այնտեղ: Նրանք ներկայացրեցին առհասարակ ՏՀՏ ոլորտը և այն, թե ինչ մասնագիտություններ կան այդ ոլորտում»:*

*<u>Ախ անդամներ</u>*

*«Այս պահին համագործակցում են «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի հետ: Նրանք աշակերտների շրջանում բնագիտական դասընթացներ են կազմակերպում և արդյունքում հիմնադրելու են փոքրիկ ջերմատուն»:*

*<u>Ախ նախագահ</u>*

*«Եթե դպրոցն ինչ-որ բանի կարիք ունի, օրինակ՝ արհեստագործական ուսուցման, դժվար չէ համապատասխան ՀԿ գտնելը: Ուղղակի պետք է որոնելու գործիքների միջոցով փորձեն տարբեր կայքեր ուսումնասիրելով, կամ որոնման այլ ձևերով գտնել այն ՀԿ-ներին, որոնք փորձ ունեն ու իրենց հետ փորձեն կոնտակտի դուրս գալ: Հակառակը, հեշտ է այն առումով, որ ՀԿ-ները բազմազան են, ուղղվածությունները շատ տարբեր են, դպրոցները միանում են ՀԿ-ներին, այստեղ գտնելու խնդիր չկա: Այլ հարց է, որ դպրոց մուտք գործելու խնդիր, անհստակություն շատ կա: Երբ ուղիղ դիմում ես դպրոցին, տնօրենների մեծ մասն ասում է, որ մեզ պետք է թույլտվություն տա ինչ-որ վերադաս մարմին՝ նախարարությունը, մարզպետարանը, չգիտեմ, ինչ-որ մեկը: Կամ, օրինակ՝ ուզում ենք ինչ-որ ուսուցչի հետ հարցազրույց անել, ուսուցիչն ինքն էլ է այդ ինքնացենզուրան կիրառում, ասում է, թող տնօրենը թույլ տա, բայց այդպիսի կարգավորում չկա, ինքն ազատ է: Այդ հարցն էլ պարզ չէ, թե որ դեպքերում տնօրենը պիտի բոլոր հարցերը համաձայնեցնի մարմինների հետ: Երևի նախարարությունը պետք է ինչ-որ կարգավորում կամ թեկուզ ոչ ֆորմալ, ինչ-որ ուղեցույցի նման մի բան մշակի: Տեսականորեն ամեն ինչ կարող է ՀԿ-ն տալ: Օրինակ մենք կարողությունների զարգացում արեցինք, իրազեկեցինք, պատրաստեցինք հոլովակ, որն ամբողջ Հայաստանի համար է, ուղեցույց պատրաստեցինք, երեխաներին տվեցինք փոքր դրամաշնորհներ, որ իրենք Ախ-ների միջոցով ծրագրեր անեն, դա ահագին բան է, որովհետև դպրոցը չի տալիս: Այսինքն, ամեն ինչ, ինչ մեր մտքով անցնում է, կարող է ՀԿ-ն տալ: Դա էլի մի ուրիշ սահմանափակում է, որ ՀԿ-ները կախված են արտաքին ֆինանսավորումից, դոնորներից ու կարող է դպրոցն ինչ-որ բաների կարիք ունենա, բայց ՀԿ-ն չունենա համապատասխան ծրագիր»:*

*<u>Փորձագետ</u>*

*«ՀԿ-ները շատ կարևոր են, որովհետև նրանք պետք է սովորեցնեն այս երեխաներին այդ հմտությունները: Այն, ինչ-որ անում են ՀԿ-ները, շատ հարցերում խաչվում է նաև Ախ-ի հետ: Ախ-ն էլ կարող է ինչ-որ խնդիրների համար պայքարել, ինչպես ՀԿ-ներն են պայքարում, Ախ-ն էլ կարող է ինչ-որ խնդիր լուծել, ինչպես ՀԿ-ներն են լուծում: Այնպես որ, ինքը՝ ՀԿ-ն մասնակցային բաներ ունի, կարող են իրարից սովորել»:*

*<u>Փորձագետ</u>*

Աշակերտական խորհուրդների գործունեության հիմնական սկզբունքներից մեկը կամավորությունն է, իսկ գործունեության ուղղություններից մեկը՝ ակտիվ մասնակցությունը դպրոցական և համայնքային կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող հարցերի քննարկմանը և ծագած խնդիրների լուծմանը: Հետազոտության շրջանակներում հարցված աշակերտների կարծիքով կամավորության մոտիվացիան դպրոցը, շրջապատը մաքուր պահելն է: Աշակերտների կամավորական գործունեությունը հիմնականում ներառում է հուշարձանների մաքրումը, ծառերի վրա նկարազարդումները, աղբի տեղափոխությունը, եկեղեցու մաքրությունը, մշակույթի տների վերանորոգումը, շաբաթօրյակների անցկացումը և այլն:

*«Կամավորության մոտիվացիան այն է, որ քո դպրոցը, քո շրջապատն ես մաքուր պահում: Մաքուր միջավայրում աշխատելը, սովորելը ավելի հաճելի է, դրանից ոգեշնչվում ենք: Մեր դպրոցում կան շատ սկաուտներ: Մենք հենց կոնկրետ երդում ենք տվել միջավայրը մաքուր պահելու, չաղտոտելու և մեր միջավայրի երեխաներին խորհուրդ տալու, որ նրանք նույնպես չաղտոտեն: Ճիշտ է, հիմնականը կենտրոնանում ենք դպրոցի վրա, բայց գործունեությունը շարունակում ենք նաև եկեղեցում: Փորձում ենք ոչ միայն մեր դպրոցով, այլ նաև Վեդի համանքի բոլոր դպրոցներով կատարել հետաքրքիր արվեստական մոտեցումներ: Հիմա, ապրիլի 1-ին էլ կլինի հետաքրքիր այդպիսի մի միջոցառում, որի շրջանակներում ծառերի վրա մենք կփորձենք նկարել գարնան թեմայով նկարներ և գեղեցկացնել մեր քաղաքը»:*

<u>*ԱԽ անդամներ*</u>

*«Երեխաների առաջարկությամբ մենք արդեն տարիներ շարունակ հուշարձանների պահպանության օրը ինքնակամ, կամավորության սկզբունքով Վեդի քաղաքի վերևի հատվածի հուշարձանները ամբողջությամբ մաքրում ենք, աղբը հավաքում, լցնում տոպրաների մեջ: Համագործակցում ենք համայնքապետարանի հետ, աղբը տեղափոխում են: Երեխաները շնորհակալագրեր են ստացել համայնքապետից»:*

<u>*Տնօրեն*</u>

*«Շաբաթօրյակներ ենք կազմակերպել ու ես կողմնակից եմ կամավորությանը: Կամավորությամբ զբաղվելու շարժառիթը բարի լինելն է: Իմ ցանկությամբ ու սիրով եմ կատարում, ինձ դա անել չեն պարտադրում»:*

<u>*ԱԽ նախագահ*</u>

*«Մասնակցել ենք գրանտային ծրագրի, որը շահելու դեպքում վերանորոգվելու է մեր համայնքային մշակույթի տունը»:*

<u>*ԱԽ անդամներ*</u>

*«Շրջակա միջավայրի պահպանության հետ կապված կազմակերպել ենք բազմաթիվ շաբաթօրյակներ, այցեր ենք կատարել նաև զոհվածի տուն, ունենք զերեվարված մի զինվոր, աշակերտները փորձել են հագուստով, սննդամթերքով օգնել՝ կամավոր սկզբունքով, առաջարկությունը եղել է իրենցը, միանշանակ ես երկու ձեռքով կողմ եմ եղել և աջակցել եմ իրենց: Ցավոք սրտի դպրոցից դուրս ԱԽ-ն ակտիվ չի գործում, քանի որ գյուղը սահմանամերձ է և ոչ մի փոխադրամիջոց այստեղ չի աշխատում: Համայնքապետարանի հետ տվյալ պահին չենք համագործակցում, քանի որ*

*համայնքապետարանում դեռ համայնքապետ չունենք, ընտրություններ է, նախկինն էլ ոչնչով չի աջակցել: Կովիդ, պատերազմ, ընտրություններ, կայուն վիճակ չի եղել, որ կարելի լիներ կլոր սեղանի շուրջ նստել և ինչ-որ հարցի լուծում ստանալ: Ամեն դեպքում ներկայիս ժամանակավոր պաշտոնակատարի հետ լավ եզրեր ենք գտել և անգամ ունենք ծրագրեր միասին «Արմաթ» լաբորատորիա բացելու»:*

*<u>Տնօրեն</u>*

*«Դպրոցից դուրս լինում են շաբաթօրյակներ: Մենք շաբաթօրյակների ժամանակ մաքրում ենք դպրոցից դուրս տարածքները, դպրոցի կողքը մոլախոտերից»:*

*<u>ԱԽ-ում չընդգրկված աշակերտներ</u>*

*«Օրինակ դպրոցի տարածքն ենք մաքրում, և վաղը շաբաթօրյակին ոչ միայն դպրոցի, այլև գյուղի գլխավոր փողոցն ու ժամի տարածքն ենք մաքրելու: Դպրոցի ճաշարանի սնունդը տղաներով կամավոր մեքենայից դատարկում, տեղափոխում ենք: Պատերազմի ժամանակ ցանցեր ենք գործել տանկերի համար»:*

*<u>ԱԽ-ում չընդգրկված աշակերտներ</u>*

*«Կամավոր աշխատանքներ արել են ԱԽ անդամները և դպրոցի սովորողները՝ համայնքի մաքրման աշխատանքներ, ծառատունկ, բարեկարգում»:*

*<u>Տնօրեն</u>*

*«Մենք պարբերաբար կազմակերպում ենք շաբաթօրյակներ, և՛ դասարանական և՛ միջանցքների, և՛ դպրոցի շրջակայքի՝ մաքրելով հասել ենք մինչև համայնքապետարան: Երեխաները սիրով են մասնակցում ու լոզունգ էին գրել «Մեր համայնքը մեր տունն է»: Մենք չենք պարտադրել, չենք ստիպել, իրենք պարբերաբար այդ աշխատանքն անում են: Քառօրյա պատերազմի ժամանակ կամավորության հիմունքներով մեր աշակերտներն ինչքան աշխատանք են արել՝ նրանք են հավաքել, փաթեթավորել և ուղարկել սահման»:*

*<u>ՄԿԱԳ</u>*

*«Մենք բոլոր միջոցառումներին մասնակցում ենք,սերտ համագործակցում ենք համայնքի հետ»:*

*<u>Տնօրեն</u>*

*«Համայնքային շաբաթօրյակների ենք մասնակցել: Վերջերս մասնակցեցինք մարտի 8-ին նվիրված միջոցառմանը և բեմականացում ներկայացրեցինք»:*

*<u>ԱԽ անդամներ</u>*

*«Աշակերտներին հիմնականում հետաքրքրում է դպրոցի ներսում կատարվող միջոցառումները ու հենց դրանով էլ պայմանավորված է հավանաբար այն, որ համայքում ակտիվ չեն»:*

*<u>ԱԽ նախագահ</u>*

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԿԱԳ ՏԵՂԱԿԱԼԻ ԵՎ ԴԱԿ ԴԵՐԸ

Աշակերտական խորհուրդների հետ աշխատանքում մեծ է նաև հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ՄԿԱԳ տեղակալի և հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների հետ ԴԱԿ դերը:[20] Մասնավորապես, հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ՄԿԱԳ **տեղակալը պետք է կարողանա՝ աջակցել և ուղղորդել աշակերտական խորհուրդների աշխատանքը,** ստեղծել պայմաններ հաստատության հասարակական վերահսկողության իրագործման համար, իսկ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը (ԴԱԿ) աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցել դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը:

Չնայած ՄԿԱԳ-ի և ԴԱԿ-ի պարտականությունների շրջանակի սահմանմանը, հետազոտությունը ցույց է տալիս, որ դպրոցների տնօրենները հիմնականում գտնում են, որ հենց ՄԿԱԳ-ից և ԴԱԿ-ից է կախված ԱԽ յուրաքանչյուր գործողություն և ԱԽ-ին չի թույլատրվում գործել ինքնուրույն՝ առանց համապատասխան թույլատվության: Աշակերտները նույնպես նշում են, որ ՄԿԱԳ-ը և ԴԱԿ-ը ուղղություն են ցույց տալիս իրենց «ավելի ճիշտ մարդ» որպես ԱԽ նախագահ ընտրելու և այլ հարցերում:

> *«Հենց ՄԿԱԳ-ից և ԴԱԿ-ից է կախված աշակերտական խորհուրդների գործողությունները: Եթե նրանք որոշել են իրենք իրենց անեն, դա չի թույլատրվում. պետք է ունենան համապատասխան թույլատվություն ջոկատավարի, տնօրենի կողմից: Ինչ-որ գործողություններ անելուց առաջ հարցնում են ՄԿԱԳ-ից, ԴԱԿ-ից, տնօրենից և ավելի լավն անելով, գործում են»:*
>
> *ԱԽ-ում չընդգրկված աշակերտներ*
>
> *«Անպայման դիմում ենք տնօրենին, կազմակերպչին, իրենց արձագանքն անպայման հաշվի ենք առնում, լսում ենք իրենց խորհուրդները, որովհետև շատ հաճախ լինում է, որ ինչ-որ բաներ հաշվի չեն առնում երեխաները, մեծ որոշումներ են կայացնում, բայց հանդիպում ենք որոշակի խոչնդոտների, էս դեպքում կարևոր է նաև լսել իրենց»:*
>
> *ԴԱԿ*
>
> *«Մեզ ուղղորդում են (ԴԱԿ, ՄԿԱԳ ), ուղղություն են տալիս, ավելի ճիշտ մարդու ընտրելու համար, դրա համար ԱԽ նախագահ ընտրվեց X-ը, ու հուսով էինք, որ գործը լավ կկատարի, ու լավ է կատարում: Տնօրենը իմանալով աշակերտին, աշակերտների սովորելու, կարգապահության, բոլոր բնավորության գծերը, ճիշտ ուղու վրա կարող է դնել, ու ճիշտ մարդու ընտրեն աշակերտական խորհուրդը՝ որպես կարգապահ, խելացի, օրինակելի, կազմակերպչական»:*
>
> *ԱԽ անդամներ*

[20] ՄԿԱԳ-ի և ԴԱԿ-ի պարտականությունները սահմանված են «ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14 հոկտեմբերի 2010 թ.-ի N 1391-Ն որոշման IV բաժնով, https://www.arlis.am/documentview.aspx?docid=122121

*«ԴԱԿ-ը, ՄԿԱԳ-ը, տնօրենը հիմնականում առաջին նիստի ժամանակ ներկայացնում են կանոնադրությունը, օրենքը՝ ամենայն մանրամանությամբ, իրազեկում են աշակերտներին, սովորողներին իրենց իրավունքները, պարտականությունները, ըստ դրա էլ, ուղղորդումը այդքանով ավարտվում է, մնացածն ընտրում են աշակերտները»:*

*ԴԱԿ*

*«Ես կարևորում եմ ՄԿԱԳ-ի և ԴԱԿ-ի դերը, բայց երեքս էլ կարող ենք հանդես գալ ընդամենը առաջարկությամբ և տանք հավանություն ԱԽ նախագահի կամ անդամների թեկնածուներին, բայց ոչ պարտադրանք: Մենք ընդամենը կարող ենք լսել, մի փոքր ճիշտ ուղղորդել, բայց ոչ պարտադրել»:*

*Տնօրեն*

*«ԱԽ անդամի և նախագահի ընտրության հարցում, բնականաբար, երեքս էլ (ՄԿԱԳ, ԴԱԿ, տնօրեն) ուղղորդում ենք, փորձում ենք, որ արժանվույնը ընտրվի և՛ նախագահը, և՛ տեղակալը, և՛ անդամները: Դասարանները դասղեկի հետ միասին ընտրում են, հետո նոր գործը հասնում է մեզ: Կարծում եմ այո, պիտի աջակցենք ԱԽ-ներին: Ամեն դեպքում իրենք աշակերտ են, մենք մեծ ենք, մենք էլ ենք սխալներ թույլ տալիս, աշակերտներն էլ բնականաբար սխալներ թույլ կտան, մենք պիտի իրենց կողքին լինենք, օգնենք, աջակցենք և մեր խորհուրդներով, և մեր փորձով, մեր գիտելիքներով»:*

*ՄԿԱԳ*

*«Դե ամենակարևոր գործոնը ՄԿԱԳ-իննն է, իրեն աջակցում է ԴԱԿ-ը, սերտ համագործակցում են, աշակերտների հետ աշխատում են: Մենք միայն ուղղորդում ենք նրանց»:*

*Տնօրեն*

*«Նախ, խորհրդակցական ձայնի իրավունքով ես մասնակցում եմ նիստերին և ծնողական խորհրդի, և աշակերտական խորհրդի»:*

*Տնօրեն*

*«Այն կանխավարկածները որ ունեինք ԱԽ-ների ձևավորման մասին հաստատվեցին, երբ խոսեցինք անձնակազմի հետ՝ ուսուցիչների, տնօրենների, նաև աշակերտների: Երևում էր, որ այդ գործընթացը հիմնականում աշակերտները չեն նախաձեռնում, այլ սովորաբար տնօրենները կամ ԴԱԿ-ը: Իսկ եթե պատճառների մասին խոսենք, պատճառները շատ են, տարիքային գործոնն էլ է կարևոր: Տարիքայինի հետ կապված է նաև իրազեկվածությունը: Մի մասը ուղղակիորեն կարող է տեղյակ չլինել որ կա ընդհանրապես ԱԽ, ինչի համար է այն: Բնականաբար ինչ-որ մեկը պետք է իրազեկի՝ մեծահասակները, ծնողը, ուսուցիչը, տնօրենը: Հաջորդ պատճառը մոտիվացիայի բացակայությունն է, որը էլի մասամբ կարող է կապված լինել իրազեկվածության հետ»:*

*Փորձագետ*

*«Այդ ազդեցությունը (տնօրենների, փոխտնօրենների) շատ մեծ է և դա, այսպես ասած, մեր մշակույթն է, մենք դեռ երեխաներին չենք թողնում ինքնուրույնություն, այդպես չենք իրենց դաստիարակում, և ընդհանրապես ընդունված է, որ Հայաստանում ղեկավար լինելը (տնօրեն, ԴԱԿ, դասղեկ) նշանակում է վերահսկել՝ հետևաբար վերահսկել նաև ԱԽ-ին, ու*

*այդ տրամաբանությամբ դպրոցներում չի ընկալվում այն, որ դա ինքնավարության մարմին է: Այսինքն, ինչպես վերահսկվում է ամեն ինչ, նույն ձևով վերահսկվում է նաև, թե ով դառնա ԱԽ նախագահ: Այդ հարցը մի առիթով քննարկել ենք ու տնօրեններից մեկը այսպիսի հետաքրքիր բան ասեց.- «Ճիշտն ասած, ես մի երկու տարի թողեցի, որ իրենք ինքնուրույն ընտրեն, ու ստացվում էր, այնպես, որ ընտրվում էր դպրոցի, այսպես ասած չար, վատ վարքագծով աշակերտը, որովհետև կարողանում էր երեխեքին վախեցնել, ազդել իրենց վրա և ընտրվել: Նաև այսպիսի բան կար, որ չես միջամտում, ընտրվում է անկանխատեսելի մի աշակերտ, որը չի կարողանում, խնդիրներ է ստեղծում, դրա համար որոշեցինք, որ պետք է մեր ուզածը ընտրվի»: Բայց իհարկե կան նաև դպրոցներ, որ ավելի չափավոր տարբերակների են գնում: Իրենք նախօրոք ընտրում են 2-3 հոգու, հետո աշակերտներին ասում են, դուք որոշեք, թե իրենցից որին եք ընտրում: Որն էլ ընտրվի մեզ համար լավ է: Այս տրամաբանություն է շատ հաճախ աշխատում: Անկեղծ ասեմ շատ աշակերտներ հետաքրքրված էլ չեն ԱԽ-ում ընդգրկվելու, որովհետև այն կարծես թե նույնացվում է ղեկավար գործերի կազմակերպչական աշխատանքների հետ և այլն, որը շատ աշակերտների դուր չի գալիս»:*

*Փորձագետ*

## ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ/ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

**Հաստատության տնօրենը** (տնօրենի պաշտոնակատարը/ պարտականությունները կատարողը) **պարտավոր է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ ապահովել հավակնորդի հանդիպումը տվյալ հաստատության աշակերտական խորհրդի հետ**՝ հաստատության զարգացման ծրագիր կազմելու համար՝ այդ մասին դիմելուց հետո, տրամադրել գրավոր տեղեկատվություն՝ հաստատության գործունեության վերաբերյալ (տվյալներ մանկավարժական, աշակերտական համակազմի, ուսումնադաստիարակչական, արտադպրոցական գործունեության, կառավարման և խորհրդակցական մարմինների մասին, ինչպես նաև հավակնորդի կողմից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա հաստատության գործունեության վերաբերյալ անհրաժեշտ այլ տեղեկատվություն): [21]

Սույն հետազոտությամբ բացահայտվել է, որ տնօրենի թեկնածուի/հավակնորդի և աշակերտական խորհուրդների միջև ոչ միշտ են տեղի ունեցել հանդիպումներ: Այդ հարցում ազդեցություն է ունեցել այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշման[22] վերաբերելի կետն ավելացվել է միայն 2021թ.-ի օգոստոսի 27-ին: Շատերն էլ՝ մինչև տնօրեն նշանակվելը, աշխատել են նույն դպրոցում, որպես ՄԿԱԳ, ԴԱԿ և ծանոթ են եղել աշակերտներին, դպրոցում առկա խնդիրներին և, հետևաբար, անհրաժեշտություն չեն տեսել տնօրենի թեկնածու եղած ժամանակահատվածում ԱԽ-ի հետ լրացուցիչ հանդիպում ունենալու:

[21] «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 մարտի 2010 թ.-ի N 319-Ն որոշումը, https://www.arlis.am/documentview.aspx?docID=155452

[22] Նույն տեղում

*«Անկեղծ ասած 2012 թ., երբ դարձել եմ տնօրեն, ես ինքս եմ եղել ԴԱԿ, այն ժամանակ կոչվում էր տնօրենի տեղակալ, այդ ժամանակ օրենքն այդպես չկար» (Կառավարության որոշման[23] համապատասխան կետն ավելացվել է 27.08.21թ.-ին):*

<u>*Տնօրեն*</u>

*«Ես ԱԽ-ի հետ հանդիպել եմ ընտրվելուց հետո: Բայց, մինչև տնօրեն ընտրվելը, որպես հավակնորդ հանդիպել եմ և՛ մանկավարժական խորհրդի, և՛ ծնողական խորհրդի հետ»:*

<u>*Տնօրեն*</u>

*«Հանդիպումներ չեն եղել, դա հետպատերազմյան շրջանում էր, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի տղան 44-օրյա պատերազմում զոհվել էր, սակայն ինքը հաստատ խոչընդոտներ չէր ստեղծի ինձ համար: Իմ զարգացման ծրագրում կան հստակ դրույթներ աշակերտական խորհրդի ակտիվ գործունեության հետ կապված: Այն ներառել եմ ուժեղ և թույլ կողմերում, դիտարկել որպես թույլ կողմ ու նրանց ակտիվ գործունեության համար էլ քայլեր մշակել»:*

<u>*Տնօրեն*</u>

*«Հանդիսանում եմ տվյալ կրթօջախի հիմնադիրներից մեկը, առաջադրվելու ժամանակ եղել եմ տվյալ դպրոցի կազմակերպիչը, ունեցել անմիջական կապ սովորողների հետ, ուստի անհրաժեշտություն չի եղել, որ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ հանդիսանալու փուլում ապահովվի իմ հանդիպումը դպրոցի աշակերտական խորհրդի հետ: Դպրոցի զարգացման ծրագրում կան դրույթներ բոլոր ոլորտների ու խորհուրդների հետ կապված, մասնավորապես՝ աշակերտական խորհրդի հետ կապված արդիականացման խնդիր եմ տեսել: Դպրոցը միշտ էլ ունեցել է լիբերալ դիրքորոշում ու հիմա էլ այդպիսին է: Մեզ համար սովորողի իրավունքը, խոսքի ազատությունը առաջնային են»:*

<u>*Տնօրեն*</u>

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

2020թ.-ին՝ հաշվի առնելով մի խումբ դպրոցականների առաջարկը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից ընդունվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի ձևավորման վերաբերյալ մի շարք իրավական ակտեր,[24] որոնց համապատասխան՝ **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի կազմում ներառվել են** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցների, ինչպես նաև ՀՀ-ում գործող լիցենզավորված ոչ պետական հանրակրթական

---

[23] ՀՀ կառավարության 4 մարտի 2010 թ.-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» N 319-Ն որոշումը, https://www.arlis.am/documentview.aspx?docID=155452

[24] ՀՀ ԿԳՄՍ նախարարի 01 փետրվարի 2020 թ.-ի «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 01-Լ հրամանը, https://escs.am/am/news/5974

ուսումնական հաստատությունների **8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների սովորողները, որոնք ընդգրկված են իրենց դպրոցների աշակերտական խորհուրդներում**, ակտիվ մասնակցություն են ունենում դպրոցական և համայնքային կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող հարցերի քննարկմանը և ծագած խնդիրների լուծմանը, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտներին, քաղաքացիական հասարակությանը, բնապահպանական, մարդու և երեխաների իրավունքների պաշտպանությանը առնչվող ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը և որոնց մասնակցությունը խորհրդի աշխատանքներին կնպաստի խորհրդի առջև դրված խնդիրների և նպատակների առավել արդյունավետ իրականացմանը:

**Խորհուրդը կազմված է առավելագույնը 45 անդամից և ձևավորվում է ըստ ենթակայության հիմնական, միջնակարգ և ավագ հանրակրթական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներից հետևյալ համամասնությամբ.**

- **Նախարարության ենթակայության՝ 5 անդամ,**
- **Երևանի քաղաքապետարանի ենթակայության՝ 5 անդամ,**
- **Յուրաքանչյուր մարզից մարզային ենթակայության՝ 3-ական անդամ**
- **Ոչ պետական հաստատություններից՝ մինչև 5 անդամ:**

Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են տարին առնվազն երկու անգամ: Խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների մեծամասնությամբ կարող է ընդունել խորհրդատվական բնույթի որոշումներ: **Խորհրդի նախագահը ԿԳՄՍ նախարարն է: Խորհուրդը գործում է 1 տարի ժամկետով:** Խորհրդի հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝ ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը, սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը օժանդակելը, սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանը օժանդակելը, սովորողների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական, ժողովրդավարական պետության կառուցմանն օժանդակելը:

Հետազոտության ժամանակահատվածում ուսումնասիրված դպրոցներից որևէ մեկը չի ունեցել ներկայացուցիչ ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից աշակերտական խորհրդում, չնայած նման ցանկության առկայությանը: Նշված խորհրդում դպրոցների՝ դրանց աշակերտների ներգրավվածության խնդրին են անդրադարձել նաև փորձագետները՝ առաջարկելով առհասարակ փոխել ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից ԱԽ-ի անվանումը՝ տարընկալումներից խուսափելու համար և ստեղծել այլ, առավել ներկայացուցչական, օրինակ՝ համայնքային ԱԽ-ներ:

*«Ներկայացուցիչ չունենք ու ծանոթ չենք նրա գործունեությանը»:*

<u>*ԱԽ անդամներ*</u>

*«Անկեղծ ասած, երբ Նախարարին կից ԱԽ-ի օրենքը դուրս եկավ, ինձ շատ դուր եկավ: Արժեր իսկապես, քանի որ արդեն պետական մակարդակով էր երեխան իմանում, որ ինքն այնքան կարևոր է, որ նույնիսկ ԿԳՄՍ նախարարությանը կից կա այդպիսի խորհուրդ: Մենք էլ ենք մեր դպրոցում երեք երեխաներից ընտրել մեկին, որ ներկայացնենք*

*մարզպետարան, բայց, իհարկե, մեր դպրոցից երեխա չի ընտրվել: Մարզից գիտենք, որ երեխա կա, որը մասնակցում է»:*

*Տնօրեն*

*«Ցավոք չունենք, բայց սիրով կուզենայինք, որ անպայման մեր դպրոցից մասնակից լիներ»:*

*ՄԿԱԳ*

*«Չենք համագործակցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի հետ: Լսել ենք իրենց մասին, շատ կցանկանանք համագործակցել, փորձում ենք տնօրենի հետ եզրեր գտնել համագործակցելու»:*

*ԴԱԿ*

*«Անցած տարի եղել է, այս տարի՝ ոչ: Գնահատում եմ դրական»:*

*Ախ նախագահ*

*«Առաջին հերթին ինձ թվում է, շատ սխալ է, որ դա կոչվում է Ախ, որովհետև դրա իմաստը նենգափոխում է. Ախ-ն հենց դպրոցում գործող իրական Ախ-ն է: Սրա անունը միգուցե դնենք «Աշակերտների հանրային խորհուրդ նախարարությանը կից» կամ «Աշակերտների հանրային խորհուրդ», ինչ-որ մի ուրիշ բան, բայց ոչ Ախ, որովհետև դրա պատճառով կեղծ տպավորություն է ստեղծվում հասարակության մոտ, որ սա է Ախ-ն և դպրոցների մասին մոռանում են: Այսինքն, անունն է շփոթեցնող: Ինքն ընդհանրապես Ախ-ի բովանդակությանը, ֆունկցիաներին համահունչ չի: Հետո, դրա կազմավորման ձևը ներկայացուցչական չէ: Ուրիշ բան, եթե հավաքվեին, ինչ-որ միջոցառումների ժամանակ ընտրեին իրենցից մեկին, լիազորեին երեք հոգու, դա գոնե կլիներ, որ իրենց ձայնը հասնում է որոշում կայացնողին, բայց քանի որ վերևից է ասվում, իմաստը նենգափոխվում է»:*

*Տնօրեն*

*«Ներգրավվածություն չենք կարող ապահովել, որովհետև մենք ունենք 1400 դպրոց, 1400 հոգու հետ հնարավոր չի, բայց կարելի է կառույցներ ստեղծել: Օրինակ՝ համայնքները խոշորացան, դրա հիման վրա կարելի է այնպես անել, որ ասենք լինի համայնքի Ախ, 40 համայնքը ունենա և ընտրի, օրինակ՝ ամեն համայնքից մի ներկայացուցիչ: Այդպես կարելի է ներկայացուցչական անել: Շատ կարևոր է ստեղծել այդ փնջային Ախ-ները, նաև օգտագործելով օնլայն հարթակները: Օրինակ՝ Ախ-ի համար թվային գործիքով մի կայք բացել, որտեղ նրանք կարող են հարցեր քննարկել, մտագրոհ անել, փորձի փոխանակում: Շատ կարևոր է այս հարթակները աշխատեցնել. երեխաները սիրում են նման բաներ»:*

*Փորձագետ*

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

**Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական**,[25] որոնց չափանիշները և իրականացման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Ներքին գնահատումը ուսումնական հաստատության կողմից իր

[25] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=153802

գործունեության վերլուծությունն է: Այն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: **Ներքին գնահատմանը մասնակցում են** վարչական և մանկավարժական աշխատողները, **սովորողները** և ծնողները: **Ներքին գնահատման հաշվետվությունը տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է** ուսումնական հաստատության խորհրդին, ծնողական, **աշակերտական և այլ գործող խորհուրդներին,** ինչպես նաև ապահովում դրա հրապարակումը տվյալ ուսումնական հաստատությունում (տեսանելի տեղում), տեղական և (կամ) հանրապետական մամուլում, նախարարության պաշտոնական կայքում: [26]

ՀՀ կառավարության 3 սեպտեմբերի 2010թ. N 1334-Ն որոշմամբ նշվում է, որ **ներքին գնահատումն իրականացվում է ուսումնական հաստատության տնօրենի հրամանի համաձայն ձևավորված հանձնաժողովի կողմից:**[27] **Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են** ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (այսուհետ՝ ուսումնական հաստատության խորհուրդ) առնվազն երկու, **մանկավարժական և ծնողական խորհուրդների՝** ուսումնական հաստատության խորհրդի կազմում չընդգրկված առնվազն մեկական անդամ, տեղական ինքնակառավարման մարմնի (Երևանի քաղաքապետարանի) առնվազն երկու ներկայացուցիչներ: Ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման չափանիշներից է ուսումնական հաստատությունում սովորողների և տնօրինության համագործակցությունը, սովորողների մասնակցությունը հաստատության գործունեությանը:

Նույն որոշմամբ սահմանվում է, որ ուսումնական հաստատությունում գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդ, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները:

Ուսումնական հաստատության աշակերտական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, սովորողների, ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում, իրականացնում է հանրօգուտ աշխատանք.

ա. աշակերտական խորհրդի նախաձեռնած քայլերը՝ ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն,

բ. աշակերտական խորհրդի ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով,

գ. աշակերտական խորհրդի նախաձեռնած միջոցառումները՝ ներառյալ կազմակերպված շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները, դրանց հաճախականությունը և մասնակից սովորողների տոկոսը,

դ. աշակերտական խորհրդի գործունեության համապատասխանությունը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին:

---

[26] ՀՀ կառավարության 3 սեպտեմբերի 2010 թ.-ի «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» N 1334-Ն որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=61586

[27] ՀՀ կառավարության 3 սեպտեմբերի 2010 թ.-ի «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» N 1334-Ն որոշումը, https://www.arlis.am/documentView.aspx?docid=144346

Այսպես, սույն հետազոտությամբ որպես օրենսդրական բնույթի խնդիր վեր է հանվել ուսումնական հաստատությունների գործունեության ներքին գնահատման գործընթացում աշակերտների ներգրավվածության հարցը: Ըստ գործող իրավակարգավորումների դպրոցի ներքին գնահատմանը մասնակցում են նաև սովորողները, անկախ այն հանգամանքից, ընդգրկված են ներքին գնահատումն իրականացնող՝ տնօրենի հրամանի համաձայն ձևավորված հանձնաժողովի կազմում, թե՝ ոչ: Հետազոտությունը ցույց է տալիս, որ սովորողները չեն մասնակցում դպրոցի ներքին գնահատմանը չնայած այն հանգամանքին, որ դրա շրջանակներում քննարկվում են նաև աշակերտներին անմիջականորեն առնչվող հարցեր: Դեռ ավելին, ըստ գործող իրավակարգավորումների, ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման չափանիշներից է ուսումնական հաստատությունում սովորողների և տնօրինության համագործակցությունը, սովորողների մասնակցությունը հաստատության գործունեությանը, ըստ որի, օրինակ, տնօրինությունը պարտավորվում է խթանել սովորողների նախաձեռնությունները, օժանդակել դրանց իրագործմանը, ապահովել սովորողների մասնակցությունն իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի վերաբերյալ տնօրինության կողմից որոշումների ընդունմանը, նման դեպքերի թիվը և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը, և այլն:

Չնայած օրենքով հստակ ամրագրված համագործակցության հնարավորություններին, հետազոտությունը փաստում է պրակտիկում նման մասնակցության խիստ պակասի մասին:

*«Ոչ, չենք մասնակցում դպրոցի ներքին գնահատմանը»:*

*Ախ անդամներ*

*«Աշակերտական խորհուրդը մասնակցում է դպրոցի գործունեության ներքին գնահատմանը, սակայն ընդգրկված չէ հանձնաժողովում (դրանում ընդգրկված են մանկավարժական և ծնողական խորհուրդները)»:*

*Տնօրեն*

*«Անկեղծ ասած, օրենքի մեջ աշակերտական խորհրդի անդամի ներկայությունը չկա: Օրինակ՝ օգտվելով նաև այս առիթից, առաջարկում եմ, որ ներքին գնահատման ժամանակ աշակերտներ ընդգրկվեին, բայց մենք ներքին գնահատման մեջ ունենք մի հսկա բաժին, որը վերաբերվում է արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներին: Շատ դեպքերում մենք երեխաների միջոցով վեր ենք հանում տարվա ընթացքում ամբողջ կատարածը և բերում միավորում ենք: Իրենք անմիջական չեն մասնակցում, բայց իրենց աշխատանքը երևում է»:*

*Տնօրեն*

*«Դրա մասին մեզ ասել է տնօրենը ու մենք մասնակցելու ենք այդ գործընթացին»:*

*Ախ անդամներ*

*«Աշակերտական խորհուրդը ընդգրկված է դպրոցի գործունեության ներքին գնահատման համար ձևավորված հանձնաժողովում»:*

*Տնօրեն*

*«Սա ոչ միայն օրենքի խնդիր է, այլ ընդհանուր մշակույթի հարց: Միշտ ընկալվում է, որ կա ղեկավար, ով ավելի լավ գիտի և պետք չէ բոլորին հարցնել: Բայց այս խնդիրների մեծ մասը հնարավոր է լուծել դպրոցից դուրս, անկախ իրազեկման ձևերով, օրինակ՝ ֆեյսբուքյան խումբ, սոցիալական ինչ-որ հարթակ: Կամ նախարարությունը պետք է ուղիղ, թեկուզ հեռուստատեսությամբ, ոչ թե միջնորդավորված ձևով, տնօրենի միջոցով աշակերտներին անընդհատ հիշեցնի ու տեղեկացնի իրենց իրավասությունների մասին»:*

*Փորձագետ*

*«Եթե օրենսդրական փոփոխությունը գնաց (կապված ներքին գնահատման հանձնաժողովում ընդգրկվելու հետ), էլի սկսվելու է մանիպուլացիան: Այսինքն, երեխեքին ասելու են դուք ներգրավվում եք, բայց գրեք այսպես, այնպես: Հասկանում եք, դրանք էլ չեն օգնում: Այդ առաջարկը, փոփոխությունը անելով, քիչ-քիչ ինչ-որ բան կփոխվի»:*

*Փորձագետ*

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Տնօրենը յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ից սկսած պլանավորում և կազմում է դպրոցի առաջիկա տարվա բյուջեի (ծախսերի նախահաշվի) նախագիծը: Բյուջեի նախագծի մշակման աշխատանքների նախապատրաստական փուլում **տնօրենը բյուջետային գործընթացին անհրաժեշտ ուղղվածություն տալու, բյուջեի մշակման աշխատանքների վերջնական արդյունքների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացնում է՝ բյուջեի նախագծի քննարկումը** մանկավարժական խորհրդի, ծնողական և **աշակերտական խորհուրդների**, կառավարման խորհրդի **հետ՝ առաջարկներ ստանալու և պարզաբանումներ տալու նպատակով**:[28,29]
Չնայած օրենսդրական համապատասխան կարգավորումներին և աշակերտների ցանկությանը՝ ըստ հարցումների, գործնականում ԱԽ-ները գրեթե չեն մասնակցում բյուջեի քննարկումներին և ազատորեն չեն տնօրինում իրենց հատկացված գումարները (դրամաշնորհները):

Աշակերտական խորհուրդների գործունեության ապահովման նպատակով Հանրակրթության ծրագրի շրջանակներում պետական բյուջեում առանձին տող նախատեսելու մտադրության և համապատասխան նախագծի առկայության հետ կապված հարցերը պարզաբանելու նպատակով սույն հետազոտության շրջանակներում հարցումներ են ուղարկվել ՀՀ ԿԳՄՍ և ֆինանսների նախարարություններ: Արդյունքում, ՀՀ ԿԳՄՍ

---

[28] ՀՀ կառավարության 25 հուլիսի 2002 թ.-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թ.-ի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու եվ 1996 թ.-ի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N 1392-Ն որոշումը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149945

[29] Դպրոցների ֆինանսավորման գործող բանաձևը սահմանված է ՀՀ կառավարության 2006թ.-ի օգոստոսի 24-ի «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու մասին» N1262-Ն որոշմամբ: Ներկայումս շրջանառության է դրված հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թ.-ի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին կառավարության որոշման նախագիծը, https://bit.ly/3Sq9Vy1

նախարարությունը հայտնել է, որ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտական խորհուրդների գործունեության կազմակերպման նպատակով ֆինանսական հատկացումներ չեն տրամադրվում: Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտական խորհուրդը գործել և գործում է բացառապես հասարակական հիմունքներով: Աշակերտական խորհուրդներին պետական բյուջեից ֆինանսական միջոցների հատկացմանն առնչվող շրջանառության մեջ դրված, կամ առաջիկայում դրվելիք իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթաց չի իրականացվում: ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ աշակերտական խորհուրդների գործունեության ապահովման նպատակով ՀՀ պետական բյուջեով միջոցներ չեն նախատեսվել: Այդ նպատակով շրջանառության մեջ դրված կամ առաջիկայում դրվելիք իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ տեղեկատվության ՀՀ ֆինանսների նախարարությունը չի տիրապետում:

Ուսումնական հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից:[30] ՀՀ կառավարությունը թույլատրել է «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպություններին իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝
ա) լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում.
բ) արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.
գ) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.
դ) սովորողների սննդի կազմակերպում.
ե) ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում:[31]
Ուսումնական հաստատությունը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով և **գործունեության ընթացքում առաջացած շահույթն կարող է օգտագործել դրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:**

Ուսումնական հաստատության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:[32] Հաստատության հաշվետու տարվա շահույթը բաշխվում է հետևյալ ուղղություններով և չափերով՝

1) **պահուստային ֆոնդ**՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 15 տոկոսի չափով (ռիսկեր և անորոշություններ՝ ներկա արժեքի և ապագայի դեպքեր, անբարենպաստ պայմանագրեր).
2) **կուտակման ֆոնդ** (ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման և ոչ ընթացիկ ակտիվների վերանորոգման նպատակով)՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 35 տոկոսի չափով.

---

[30] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=165006
[31] ՀՀ կառավարության 25 հուլիսի 2002 թ.-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թ.-ի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու եվ 1996 թ.-ի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին N 1392-Ն որոշումը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149945
[32] Նույնանման կարգավորում է նախատեսված նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, https://www.arlis.am/documentview.aspx?docid=158948

3) **սպառման ֆոնդ**՝ հաշվետու տարվա շահույթի մինչև 50 տոկոսի չափով, որը ներառում է՝

ա. աշխատողների նյութական խրախուսման ֆոնդը (մասնագիտական և բարեխիղճ աշխատանքի համար),

բ. դրամական օգնության ֆոնդը (աշխատողների երկարատև հիվանդության, մահվան, աշխատողների հարազատների մահվան, ինչպես նաև ամուսնության և այլ առիթներով),

գ. բարեգործական ֆոնդը (սոցիալապես անապահով ընտանիքներից աշակերտներին օգնություն (հագուստ, տարրական դասարաններում անվճար սնունդ և այլն),

դ. **այլ (կարող է ներառել կանոնադրական խնդիրների իրականացման համար նախատեսված այլ նպատակներ):** [33]

Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը սահմանում է հաշվետու տարվա շահույթի բաշխման ուղղությունները և չափերը: Հետազոտությամբ պարզվել է, որ ուսումնասիրված դպրոցներից որևէ մեկը չի զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ կառավարությունը դպրոցներին թույլատրել է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն և ստացված շահույթը բաշխել կանոնադրական խնդիրների իրականացման համար նախատեսված նպատակների համար: Հետևաբար, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում և, ամենակարևորը՝ դպրոցների կանոնադրությամբ ԱԽ գործունեության, դրա դերի բարձրացման, հզորացման վերաբերյալ ամրագրված դրույթներ ունենալու պարագայում, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը հնարավոր կլինի հատկացնել ԱԽ գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

*«Ըստ կարգի բյուջեի նախապատրաստական աշխատանքների փուլին պետք է նաև խորհրդատվական կարգով մասնակցի ԱԽ-ն, ծնողական խորհուրդը: Բայց աշակերտական խորհրդին չենք ներգրավել այդ աշխատանքում, քանի որ ես ինքս էլ այդքան ծանոթ չէի բյուջեի խնդիրներին: Այս տարի, քանի որ առաջին տարին էր և ես ժամանակավոր պաշտոնակատար էի հանդիսանում, փորձել եմ ծնողական խորհրդի նախագահին, կառավարման խորհրդին ու մանկավարժական խորհրդին ընդգրկել: Չի եղել դեպք, որ ԱԽ-ի առաջարկով փոփոխություն անենք բյուջեում, քանի որ ԱԽ-ին չենք ներգրավել այդ աշխատանքում: Առայժմ մեր ֆինանսներով փորձում ենք ձեռնարկատիրական գործունեություն անել, բյուջեից չենք նախատեսել: Ստացած շահույթով փորձում ենք ունենալ աղբամաններ, հիմա ընթացքի մեջ է, տղաներն իրենց ձեռքով են պատրաստում: 12-րդ դասարանի աշակերտները, ԱԽ-ն աղբամաններ, դպրոցից դուրս նստարաններ են պատրաստել, ծառատունկ արել, բերել տնկիները, «Փառքի սրահ» կազմակերպել և այլն»:*

*Տնօրեն*

*«Իմ աշխատած տարիների ընթացքում չի եղել այդպիսի դեպք, որ ԱԽ-ի առաջարկների հիման վրա բյուջեում փոփոխություն կատարվի, բայց, եթե հանկարծ լինի, շատ կարևոր*

[33] ՀՀ կառավարության 2 դեկտեմբերի 2010 թ.-ի ««Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության շահույթի օգտագործման կարգը հաստատելու մասին» N 1579-Ն որոշումը, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=74429

*եմ համարում աշակերտի կարծիքը: Աշակերտը պետք է հասկանա, որ ինքը շատ կարևոր մարդ է դպրոցում, իր առաջարկությունը, իր հոգսերը, իր խնդիրները, իր պրոբլեմները, դա հենց մերն է, և՛ մանկավարժական խորհրդինը, և՛ ծնողական խորհրդինը: Ողջունելի կլինի, որ բյուջեից որոշակի գումար հատկացվի ԱԽ-ին, որովհետև, եթե լինի գումար, իրենք կունենան լավ առաջարկներ»:*

*Տնօրեն*

*«Իրենք չեն մասնակցում, բայց եթե առաջարկություններ են ունենում, օգնություն անպայման կա»:*

*Տնօրեն*

*«Մասնակցել ենք, արել առաջարկություն, այն է ֆիզկուլտորայի համար անհրաժեշտ նյութեր ձեռք բերել ու տնօրենը դա ներառել է բյուջեյում»:*

*ԱԽ անդամներ*

*«Ինձ միշտ ոչ թե հետաքրքրել, այլ դուր է եկել հաշվապահությամբ զբաղվելը, սակայն դեռ չի եղել դեպքեր, որ բյուջեի մասին խոսենք: Սակայն ԱԽ-ի գործունեության ընթացքում, երբ մենք առաջարկներ ենք արել, մեր տնօրենը մեզ չի մերժել»:*

*ԱԽ նախագահ*

*«Եթե ինչ-որ առաջարկներ կան, ԱԽ-ն ինչ-որ բան է որոշել, որ պետք է դպրոցի համար գնվի, էդ ժամանակ թող նախագահը իմանա բյուջեի մասին, առաջարկով մոտենա տնօրենին: Էլեկտրոնային գրատախտակն արդեն առկա է, բյուջեից է տրամադրվել գումար: Եթե բյուջեից գումար հատկացվի, կարող ենք ծառերը շատացնել դպրոցում, փոքրիկ ջերմոց հիմնել, որից ստացված բանջարեղենը կօգտագործվի ճաշարանում: Կարելի էր պաստառ պատրաստելու համար իրերի պաշար ունենալ, այսինքն ամեն անգամ չվազել գրախանութ, ունենայինք գրենական պիտույքներ՝ ամեն պահին: Կցանկանայի որ գումարը հատկացվեր քարտեզներին, մակետներին, որ վերանորոգվեին հներն ու գնվեին նորերը»:*

*ԱԽ անդամներ*

*«Չէ, չենք մասնակցել: Եթե բյուջեից ԱԽ-ին տրամադրվեր գումար, մի շարք բաներ ունենք, որ կցանկանայինք իրոք փոխել, դպրոցի ինչ-որ անկյուն ստեղծել: Եթե գումար մնար, կցանկանայինք մշակութային տեղեր այցելել»:*

*ԱԽ նախագահ*

*«Հենց դահլիճի վերանորոգումը եղել է նման առաջարկության հետևանքով»:*

*ԱԽ նախագահ*

*«Դպրոցը չի զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ, սակայն տնտեսագիտություն առարկայի շրջանակներում սովորողները թափոններից պատրաստում են իրեր, աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվում է ցուցահանդես-վաճառք և հասույթով դպրոցի համար գնվել են քարտեզներ: Դա եղել է 1 անգամ, իմ կառավարման ընթացքում, թեպետ պատրաստվում ենք հաջորդին: Բայց դպրոցը որպես այդպիսին շահույթ չունի»:*

*Տնօրեն*

*«Նախ գումար չկա առանձին հատկացված ԱԽ-ի համար: Մենք առաջարկություն էինք մշակել, որ պետք է լինի առանձին տող բյուջեում, գոնե շատ փոքր, սիմվոլիկ գումար, որ աշակերտներն իմանան, որ դա իրենց փողն է և այն կախված չէ ինչ-որ մեկի կամքից: Իսկ այսպես, երբ ցանկացած հարցով մոտենում են տնօրենին, ասում՝ ներկ է պետք, նյութ է պետք, դա արդեն հերիք է, որ լրիվ կախվածության մեջ լինեն: Բացի այդ, մեր ծրագրով այն ֆինանսական միջոցները, որ տալիս էինք աշակերտներին, էլի անուղղակիորեն հասկացանք, որ լրիվ ազատ չեն եղել դրանք տնօրինելիս: Այսինքն, ուսուցիչն ասել է, որ տրվել է գումար, որով պետք է ծախսել այս կամ այն կերպ: Հետևաբար, եթե տալիս ես ռեսուրս, պիտի համոզվես, որ իսկապես դա երեխաներն են տնօրինում»:*

<u>*Փորձագետ*</u>

*«Մեր մշակույթը փոքրուց չի դաստիարակում այդ հատկանիշները. երեխաներին հնարավորինս ասում են դա ձեր գործը չէ: Կարծում եմ կարիք կա բյուջեից գումար հատկացնել: Ես, օրինակ՝ կհատկացնեի որոշակի գումար և իրենց էլ կսովորեցնեի այդ բյուջեն կառավարել, տնօրինել, որպեսզի նաև ֆինանսական գրագիտության հմտություններ ձեռք բերեն, նաև թափանցիկության և այլն: Ոչ մի խնդիր չեմ տեսնում, որ ասենք տարեկան հարյուր, երկու հարյուր հազար դրամ տանք երեխաներին, որ իրենք տնօրինեն այդ գումարը, բայց բոլոր պայմանները պահպանելով»:*

<u>*Փորձագետ*</u>

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշակերտական խորհուրդների ձևավորմանն ու գործունեությանն առնչվող իրավակարգավորումների՝ ՀՀ ներպետական և միջազգային օրենսդրական դաշտի ուսումնասիրությամբ և հետազոտության շրջանակներում դպրոցի տնօրեններից, ՄԿԱԳ-ներից, ԴԱԿ-երից, ԱԽ նախագահներից, ԱԽ անդամներից, ԱԽ անդամ չհանդիսացող աշակերտներից հավաքագրված տվյալների համադրման արդյունքում բացահայտվել են գործնականում դրանց միջև առկա հակասություններն ու անհամապատասխանությունները, ինչպես նաև վեր են հանվել որոշակի օրենսդրական բացեր: Մասնավորապես, բացահայտվել է, որ դպրոցներում առկա է աշակերտների նկատմամբ տարբերակված վերաբերմունք և խտրականություն՝ նրանք անտեսված են, ուշադրությունից դուրս և, չնայած իրենց ցանկությանը ներգրավված չեն ինչպե՛ս դասարանական, այնպե՛ս էլ աշակերտական խորհուրդներում:

Տնօրենությունը, որպես ԱԽ նախագահի թեկնածու, հիմնականում նախապատվությունը տալիս են արական սեռին պատկանող, բարձր առաջադիմություն ունեցող անձանց: Աշակերտների մոտեցումն այս հարցում տարբերվում է. վերջիններիս համար ԱԽ նախագահին բնորոշ հատկանիշներն են ակտիվությունը, պարտաճանաչությունը, կարգապահությունը, համբերատարությունը, բարի համբավը, «լավ մարդ և լավ ընկեր» լինելը և այլն: Որոշ դպրոցներում ԱԽ նախագահն ընտրվում է դասարանական խորհրդի նախագահների կամ աշակերտական խորհրդի անդամների կողմից: Այսինքն, մյուս սովորողները չեն մասնակցում նախագահի ընտրության քվեարկությանը, մինչդեռ, գործող օրենսդրությունը նախատեսում է, որ աշակերտական խորհրդի նախագահը պետք է ընտրվի հաստատության սովորողների կողմից՝ փակ, գաղտնի քվեարկության միջոցով, ձայների պարզ մեծամասնությամբ, սակայն ոչ պակաս, քան սովորողների ընդհանուր թվի կեսից ավելիի մասնակցությամբ:

Փաստացի, ԱԽ նախագահի ընտրության կարգը չի պահպանվում շատ դպրոցներում: Տնօրենի թեկնածուի/հավակնորդի և աշակերտական խորհուրդների միջև ոչ միշտ են տեղի ունենում հանդիպումներ, քանի որ մի կողմից կառավարության համապատասխան որոշման[34] վերաբերելի կետն ավելացվել է միայն 2021թ.-ի օգոստոսի 27-ին, մյուս կողմից՝ շատերը՝ մինչ տնօրեն նշանակվելը, աշխատել են նույն դպրոցում, որպես ՄԿԱԳ, ԴԱԿ և ծանոթ են եղել աշակերտներին և դպրոցում առկա խնդիրներին և, հետևաբար, անհրաժեշտություն չեն տեսել տնօրենի թեկնածու եղած ժամանակահատվածում ԱԽ-ի հետ լրացուցիչ հանդիպում ունենալու: Առկա են խնդիրներ կապված դպրոցներում ընդհանուր ժողովների անցկացման հետ, քանզի որոշ դպրոցների սովորողներ ընդհանրապես տեղեկացված չեն և չեն մասնակցում ընդհանուր ժողովներին: ԱԽ-ները հիմնականում գործում են օրինակելի կանոնադրության հիման վրա՝ առանց դրանում էական փոփոխություններ կատարելու: Որոշ ԱԽ-ներ ունեն իրենց անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշներ և անհատականացման այլ միջոցներ:

ԱԽ գործունեության հիմնական խնդիրներից մեկն այն է, որ այն շատ դպրոցներում տնօրինության կողմից չի դիտարկվում որպես հաստատության կառավարման խորհրդին,

[34] ՀՀ կառավարության 4 մարտի 2010 թ.-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» N 319-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docID=155452

մանկավարժական խորհրդին, ծնողական խորհրդին և տնօրինության կողմից սովորողներին անմիջականորեն վերաբերող այլ աշխատանքների իրականացմանն աջակցող մարմին և դրա նախագահը չի մասնակցում հաստատության մանկավարժական, ծնողական խորհուրդների, կառավարման խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Հարցմանը մասնակցած աշակերտներից ոմանք նշել են, որ «այնտեղ քննարկվում են այնպիսի հարցեր, որոնցում իրենց ներկայությունը պարտադիր չէ», իսկ մասնակցելու դեպքում էլ առավելապես քննարկվում են էքսկուրսիաների, առաջադիմության և կարգապահության հետ կապված հարցեր:

Տնօրինությունները հիմնականում գտնում են, որ հենց ՄԿԱԳ-ից և ԴԱԿ-ից է կախված «ամեն բան» և ԱԽ-ին չի թույլատրվում ինքնուրույն գործել՝ առանց համապատասխան թույլատվության: Աշակերտները նույնպես նշում են, որ ՄԿԱԳ-ը և ԴԱԿ-ը ուղղություն են ցույց տալիս իրենց որպես ԱԽ նախագահի «ավելի ճիշտ մարդ» ընտրելու հարցում: Այս հիերարխիկ հարաբերությունների բնույթը տեսանելի է ոչ միայն դպրոցի ներսում, այլ հանրակրթության տարբեր օղակներում, ներառյալ՝ մարզպետարանները: Այսինքն՝ դպրոցի սովորողները, ուսուցիչները, տնօրենները, մարզպետարանների ներկայացուցիչները ունեն արմատացած գործելակերպ այն հարցում, որ նրանց կողմից իրականացվելիք յուրաքանչյուր գործողության և կայացվելիք որոշման համար անհրաժեշտ պայման է «վերադասության կարգով», իսկ առավելապես ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից տրված թույլտվությունը:

Խնդրահարույց է նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը կից ԱԽ-ի գործունեության արդյունավետությունը: Ուսումնասիրված դպրոցները ներկայացուցիչներ Նախարարությանը կից խորհրդում չունեն, մինչդեռ վերջիններս ունեցել են նման ցանկություն: ԱԽ գործունեությունը հիմնականում սահմանափակվում է մշակութային (երաժշտագիտական, արվեստաբանական), սպորտային (ֆուտբոլ, սպորտլանդիա) և բնապահպանական (ծառատունկ, կանաչապատում, մաքրման աշխատանքներ) միջոցառումներով: Հազվադեպ լինում են նաև գիտական միջոցառումներ: Գրեթե բոլոր դպրոցներում աշակերտների կողմից իրականացված միջոցառումների և նախաձեռնությունների շարքում առանձնակի տեղ է գրավում 2020թ.-ի Արցախյան 44-օրյա պատերազմի արդյունքում վիրավորված կամ զոհված անձանց ընտանիքներին աջակցության տրամադրումը, թեմային նվիրված ուխտագնացությունների և միջոցառումների կազմակերպումը:

Դպրոցներում արտադասարանական և արտադպրոցական խմբակների գործունեությունը հիմնականում դադարեցվել է Կորոնավիրուսով պայմանավորված, մինչդեռ հետազոտությունը ցույց է տվել, որ շատ աշակերտներ ներկայումս ունեն բազմապիսի հետաքրքրություններ, որոնք բավարարելու համար հաճախ նույնիսկ համայնքից համայնք են տեղափոխվում: Դպրոցներում գրեթե չկան նաև աշակերտների կողմից ստեղծված ակումբներ: Ուսումնասիրված դպրոցներում աշակերտական խորհուրդներում՝ գործունեությունը օրինակելի կանոնադրության համաձայն կազմակերպելու նպատակով ստեղծվել են հիմնականում սպորտի, ռազմամարզական, մշակույթի, ԶԼՄ (տեղեկատվական), կարգապահական, ուսումնադաստիարակչական, սանիտարահիգիենիկ, կազմակերպչական և այլ հանձնախմբեր:

Խնդրահարույց է նաև ԱԽ-դպրոց-ՀԿ համագործակցության թեման: Վերջիններս չեն կարողանում գտնել միմյանց և իրականացնել համատեղ ծրագրեր և միջոցառումներ:

Աշակերտներն իրականացնում են կամավորական գործունեություն, որը հիմնականում ներառում է հուշարձանների մաքրումը, ծառերի վրա նկարազարդումները, աղբի տեղափոխությունը, եկեղեցու մաքրությունը, մշակույթի տան վերանորոգումը, շաբաթօրյակների անցկացումը և այլն: Հետազոտությամբ օրենսդրական բնույթի խնդիր է վեր հանվել նաև ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման գործընթացի հետ կապված: Աշակերտական խորհրդի անդամները փաստացի չեն մասնակցում դպրոցի ներքին գնահատմանը, չնայած այն հանգամանքին, որ դրա շրջանակներում քննարկվում են նաև աշակերտներին անմիջականորեն առնչվող հարցեր:

Հետազոտությամբ պարզվել է, որ ուսումնասիրված դպրոցները չեն զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ և հետևաբար չունեն դրանից ստացված շահույթ, որը կկարողանային օգտագործել դպրոցի կանոնադրական նպատակների իրականացման, այդ թվում՝ ԱԽ գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտական խորհուրդների գործունեության կազմակերպման նպատակով ֆինանսական հատկացումներ չեն տրամադրվում: Աշակերտական խորհուրդներին պետական բյուջեից ֆինանսական միջոցների հատկացմանն առնչվող շրջանառության մեջ դրված, կամ առաջիկայում դրվելիք իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթաց չի իրականացվում:

Այսպիսով, ափոփելով վերոգրյալը,

## ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆՔ

1. **ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը.**
   - (Աջակից կառույցներ՝ ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան, ՀԿ-ներ) ԱԽ ձևավորման կարգի, գործունեության ուղղությունների և ԱԽ լիազորությունների վերաբերյալ մշակել տեղեկատվական ուղեցույցեր, տեսահոլովակներ՝ տարածելով տեղեկատվության փոխանցման տարբեր մատչելի եղանակներով՝ թղթային, էլեկտրոնային, հեռուստատեսային:
   - (Աջակից կառույցներ՝ ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան, ՀԿ-ներ)Իրականացնել վերապատրաստումներ դպրոցների տնօրենների, ՄԿԱԳ-ների և ԴԱԿ-երի համար՝ իրենց պաշտոնային պարտականությունների պարզաբանման, մասնավորապես՝ ԱԽ-ների ձևավորման և գործունեության շրջանակներում նրանցից յուրաքանչյուրի դերի և լիազորությունների հստակեցման նպատակով:
   - (Աջակից կառույցներ՝ ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան, ՀԿ-ներ) Մշակել դպրոցներում խտրականության կանխմանն ուղղված տեղեկատվական ուղեցույցեր, տեսահոլովակներ և տարածել տեղեկատվության փոխանցման տարբեր մատչելի եղանակներով՝ թղթային, էլեկտրոնային, հեռուստատեսային և այլն: Ստեղծել խտրականության դեպքերին արձագանքելու մեխանիզմներ (օրինակ՝ թեժ գիծ, ԱԽ հանձնախումբ):
   - (Աջակից կառույցներ՝ ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան, ՀԿ-ներ) Խրախուսանքների, դրամաշնորհների միջոցով խթանել

դպրոցներում և դպրոցի սահմաններից դուրս աշակերտների կողմից իրականացվող կամավորական բնույթի միջոցառումների ու նախաձեռնությունների անցկացումը, չսահմանափակվելով միայն մշակութային, սպորտային և բնապահպանական միջոցառումներով (օրինակ՝ գիտական, քաղաքական, առողջապահական, ֆինանսական բնույթի նախաձեռնություններ և այլն), ինչպես նաև խթանել կամավորությունը իրազեկման գործիքների միջոցով:

- (Աջակից կառույցներ՝ ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան) Դպրոցների ուսուցիչների, տնօրենների և մարզպետարանների ներկայացուցիչների շրջանում՝ դպրոցների ենթակայության վերաբերյալ իրականացնել իրազեկման աշխատանքներ՝ գրավոր և բանավոր հայտարարությունների, քննարկումների միջոցով՝ դպրոցների հետ հաղորդակցությունը անմիջական և առավել մատչելի դարձնելու նպատակով:
- (Աջակից կառույցներ՝ ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան) Վերանայել ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը կից ԱԽ-ի գործունեության ձևաչափը, դրանում ընդգրկելով առավել շատ թվով դպրոցներից ներկայացուցիչներ: Ըստ անհրաժեշտության ստեղծել այլ աշակերտական խորհուրդներ, օրինակ՝ համայնքային ԱԽ-ներ և մշակել վերջինիս ձևաչափը՝ այն դարձնելով առավել ներկայացուցչական:
- Փոփոխություն և լրացում կատարել ՀՀ Կրթության և գիտության նախարարի 17 մայիսի 2011 թ. «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին N 571-Ն հրամանում՝ դրանում ևս նախատեսելով ԱԽ-ի մասնակցության հնարավորություն դպրոցի բյուջեի նախագծի մշակման քննարկումներին, ինչպես նախատեսված է այլ իրավական ակտերով:
- (Աջակից կառույցներ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն)- Մշակել և շրջանառության մեջ դնել պետական բյուջեից հանրակրթության ծրագրի միջոցառումների շրջանակներում՝ բյուջեի առանձին տողով, ԱԽ-ներին ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների և լրացումների նախագիծ:

## 2. Դպրոցներին.

- ՄԿԱԳ-ի միջոցով ապահովել մանկավարժական խորհրդի նիստերին ԱԽ նախագահի մասնակցությունը խորհրդակցական ձայնի իրավունքով, քանի որ գործող օրենսդրությամբ (ՄԿԱԳ) տեղակալը պետք է կարողանա՝ աջակցել և ուղղորդել աշակերտական խորհուրդների աշխատանքը:
- ՄԿԱԳ-ի միջոցով ապահովել սովորողների ընդհանուր ժողովում հաստատության 6-12-րդ դասարանների սովորողների մասնակցությունը (ԱԽ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև 5-րդ դասարանի սովորողների):
- ՄԿԱԳ-ի միջոցով ապահովել ԱԽ նախագահի ընտրությունների պատշաճ անցկացումն ու նրա ընտրությունը հաստատության սովորողների կողմից (ոչ պակաս, քան սովորողների ընդհանուր թվի կեսից ավելիի մասնակցությամբ):

Բացառել տնօրինության ազդեցությունը ԱԽ նախագահի թեկնածու առաջադրելու հարցում:

- Ապահովել տնօրենի թեկնածուի/հավակնորդի և աշակերտական խորհուրդների միջև հանդիպումները:
- Ստեղծել դպրոցի գործունեությանը աջակցող խորհրդակցական այլ մարմիններ, օրինակ՝ շրջանավարտների խորհուրդներ և այլն:
- (Աջակից կառույցներ՝ ԱԽ-ներ)- Չսահմանափակվել օրինակելի կանոնադրությամբ և հաշվի առնելով աշակերտների կարիքները՝ մշակել սեփական կանոնադրությունը, ինչպես նաև ձևաթղթերը, խորհրդանիշները և անհատականացման այլ միջոցները:
- (Աջակից կառույցներ՝ ԱԽ-ներ)- Դպրոցներում ստեղծել ակումբներ, խմբակներ և այլ միավորումներ՝ սովորողների բազմաբնույթ կարիքներին և հետաքրքրություններին համապատասխան, ապահովելու համար դրանց մատչելիությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բազմաթիվ աշակերտներ խմբակներին մասնակցելու նպատակով հաճախ՝ ստիպված, համայնքից համայնք են տեղափոխվում:
- (Աջակից կառույցներ՝ ԱԽ-ներ, ՅԿ-ներ)- ՅԿ-ների և դպրոցների/ ԱԽ-ների միջև համագործակցության եզրեր գտնելու նպատակով ստեղծել ՅԿ-ների, դպրոցների, ԱԽ-ների կոնտակտային բազաներ (հասցե, հեռախոսահամար, գտնվելու վայր և այլն), տարածել այն հանրային հարթակներում՝ կից հայտարարությամբ՝ համագործակցության պատրաստակամության վերաբերյալ:
- Ապահովել դպրոցի սովորողների մասնակցությունը դպրոցի ներքին գնահատմանը՝ ՀՀ Կառավարության 3 սեպտեմբերի 2010 թ. ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը հաստատելու մասին N 1334-Ն որոշմանը համապատասխան:
- Ապահովել ԱԽ անդամների մասնակցությունը բյուջեի նախագծի քննարկումներին՝ հատկապես սովորողներին (այդ թվում ԱԽ-ին) անմիջականորեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ՝ գործող իրավակարգավորումներին համապատասխան:
- Պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրություններում նախատեսել ԱԽ գործունեությանն առնչվող դրույթներ՝ դպրոցի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը այդ նպատակով բաշխելու նպատակով՝ ՀՀ Կառավարության 2 դեկտեմբերի 2010 թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության շահույթի օգտագործման կարգը հաստատելու մասին N 1579-Ն որոշմանը համապատասխան:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


- Մարդկային Զարգացման Ազգային Զեկույց, 2006թ.:
- Վիգեն Շիրվանյան- Աշակերտական խորհուրդների գործունեությունը Հայաստանում. քաղաքականության վերլուծություն, Երևան 2013թ.:
- Տ. Մաթոսյան, Մ. Գալստյան, Ժողովրդավարական կրթությունը Հայաստանում. իրավիճակի վերլուծություն, ՍԻՎԻՏԱՍ ՀԿ, 2015թ.:
- Մ.Կ. Գալստյան Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն-Երիտասարդների մասնակցության հարթակները ՀՀ կրթական համակարգում: ԼՐԱԲԵՐ. Հայ-ռուսական համալսարանի սերիա՝ հումանիտար և հասարակական գիտություններ (34) ՀՌՀ հրատարակչություն № 1/2020:
- Վահրամ Թոքմաջյան- Հանրակրթության կառավարման համակարգի խնդիրները, Երևան 2020
- Ինչպես ստեղծել արդյունավետ աշակերտական խորհուրդ. ուղեցույց. Հանրային քաղաքականության ինստիտուտ, 2021թ.
- 14 ապրիլի 1999թ.-ին ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենք
- 23 հոկտեմբերի 2001թ.-ին ընդունված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
- 07 մայիսի 2002թ.-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
- 25 հուլիսի 2002 թ.-ի ՀՀ կառավարության ««Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առեվտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թ.-ի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 1996 թ.-ի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1392-Ն որոշում
- 24 օգոստոսի 2006թ.-ի ՀՀ կառավարության «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու մասին» N1262-Ն որոշմամբ: Ներկայումս շրջանառության է դրված հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թ.-ի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին կառավարության որոշման նախագիծ
- 26 դեկտեմբերի 2008թ.-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
- 10 հուլիսի 2009թ.-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- 04 մարտի 2010 թ.-ի ՀՀ կառավարության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին**»** N 319-Ն որոշում
- 18 մարտի 2010 թ.-ի ՀՀ կրթության եվ գիտության նախարարի «Պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձեվավորման կարգը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության կրթության եվ գիտության նախարարի 2006 թ.-ի դեկտեմբերի 8-ի N 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 113-Ն հրաման

- 03 սեպտեմբերի 2010 թ.-ի ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» N 1334-Ն որոշում
- 14 հոկտեմբերի 2010 թ.-ի ՀՀ կառավարության «ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին» N 1391-Ն որոշում
- 02 դեկտեմբերի 2010 թ.-ի ՀՀ կառավարության ««Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության շահույթի օգտագործման կարգը հաստատելու մասին» N 1579-Ն որոշում
- 17 մայիսի 2011 թ.-ի ՀՀ կրթության եվ գիտության նախարարի ««Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առեվտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 571-Ն հրաման
- 14 նոյեմբերի 2019թ.-ին ընդունված «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք
- 01 փետրվարի 2020 թ.-ի ՀՀ ԿԳՄՍ նախարարի «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 01-Լ հրաման
- 22 դեկտեմբերի 2020թ.-ի ՀՀ ԿԳՄՍ նախարարի «ՀՀ ԿԳՄՍ նախարարի 01 փետրվարի 2020 թ.-ի «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 01-Լ հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 41-Լ հրաման
- 02 դեկտեմբերի 2021թ.-ի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի կազմը հաստատելու մասին» N 1717- Ա/2 հրաման

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Հավելված 1**

**ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

(Աշակերտական խորհրդի համար)

Սույն ուղեցույցը կազմվել է «Աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետության ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Քաղաքացիական հասարակության շրջանում հանրային հաշվետվողականության ապահովման մեխանիզմների ամրապնդման (ՍԱՆԿՈՒՍ)» ծրագրի շրջանակներում:

Քննարկման նպատակն է ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետությունը, ներառյալ՝ աշակերտական խորհուրդների անկախությունը, ինքնավարությունը, ներգրավվածությունն ու մասնակցությունն ու թափանցիկությունը:

Քննարկման արդյունքները վերլուծվելու են ընդհանրական տեսքով և մասնակիցների անձնական տվյալները հրապարակման ենթակա չեն:

*Բոլոր նոթագրումներն ու ձայնագրումները հետապնդում են զուտ մի նպատակ, այն է՝ չկորցնել և չմոռանալ ինչող տեղեկությունը:

| | |
|---|---|
| Քննարկման անցկացման ամսաթիվ | |
| Քննարկման անցկացման վայր (մարզ, քաղաք/գյուղ) | |
| Դպրոցի անվանումը | |

**Ներածական հարցեր**

1. Խնդրում ենք ներկայացնել, որ՞ դասարանում եք սովորում: Ի՞նչն է ամենաշատը դուր գալիս Ձեզ դպրոցում, ի՞նչը կուզեիք փոխել:
2. Ի՞նչ հետաքրքրություններ ունեք, բացի դպրոցից այլ խմբակներ հաճախու՞մ եք:

**Ախ և անդամներ**

3. Կպատմե՞ք Ախ-ի ձևավորման մասին: Ովքե՞ր կարող են լինել աշակերտական խորհուրդների անդամներ: Քանի՞ անդամից է կազմված Ձեր աշակերտական խորհուրդը: Ինչո՞վ է պայմանավորված այդ թիվը: Ինչպե՞ս եք դուք ներգրավվել Ախ-ում:
4. Ինչպե՞ս կարող է աշակերտական խորհրդի անդամի կամ նախագահի ընտրության հարցում ազդեցություն ունենալ աշակերտի բարձր առաջադիմությունը: Ո՞ր սեռին է տրվում նախապատվություն՝ անդամ կամ նախագահ ընտրվելու հարցում: Կա՞ն ինչ-որ չափորոշիչներ, որին պետք է համապատասխանի Ախ անդամը:

5. Խնդրում ենք նկարագրել նաև սովորողների առաջին ընդհանուր ժողովի գործընթացը, ի՞նչ հարցեր են քննարկվում, ի՞նչ որոշումներ են կայացվում դրա շրջանակներում:
6. Ինչպե՞ս է մշակվել Ձեր ԱԽ կանոնադրությունը: Դուք անձամբ մասնակցե՞լ եք աշակերտական խորհրդի կանոնադրության մշակման աշխատանքներին: Ձեր աշակերտական խորհրդի կանոնադրությամբ նախատեսե՞լ եք, որ ընդհանուր ժողովին կարող են մասնակցել նաև 5-րդ դասարանի սովորողները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:
7. Ունե՞ք Ձեր անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
8. Ո՞վ կարող է լինել աշակերտական խորհրդի նախագահ, ու՞մ կողմից է ընտրվում, ի՞նչ ժամկետով: Ի՞նչ դեր ունի նախագահի ընտրության հարցում ԴԱԿ-ը (հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ), ՄԿԱԳ-ը (հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ), տնօրենը:
9. Եղե՞լ են դեպքեր, երբ աշակերտական խորհրդի նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են: Եթե այո, խնդրում ենք ներկայացնել դեպքը (օրինակ՝ այլ հաստատություն տեղափոխվելու, հրաժարական տալու, ինչպես նաև նրան անվստահություն հայտնելու դեպքերում):
10. Ինչպե՞ս են հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով (ՄԿԱԳ) տեղակալը և հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը (ԴԱԿ) և տնօրենը մասնակցում աշակերտական խորհուրդների գործունեությանը:

**Իրականացված ծրագրեր և համագործակցություն**

11. Ըստ Ձեզ ի՞նչ պետք է անի ԱԽ-ն: Փաստացի ինչո՞վ է զբաղվում:
12. Ինչպիսի՞ միջոցառումներ և ծրագրեր եք իրականացրել մինչ օրս, ինչ ոլորտներում և ի՞նչ արդյունքներ եք ունեցել: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ԱԽ-ների կողմից իրականացվող միջոցառումները հիմնականում մշակութային կամ ստորտային ոլորտի են, ինչո՞վ է դա պայմանավորված:
13. Ձեր կողմից ստեղծվե՞լ են մասնագիտացված հանձնախմբեր: Եթե այո, ապա ինչպիսի՞, ինչ ծրագրեր և միջոցառումներ են դրանք իրականացնում:
14. Ինչպե՞ս եք համագործակցում դասարանական խորհուրդների և հանձնախմբերի հետ:
15. Երբևէ համագործակցե՞լ եք Հայաստանի և օտարերկրյա կրթական հաստատությունների սովորողների ինքնավարության մարմինների ու կազմակերպությունների (աշակերտական խորհուրդների) հետ: Խնդրում ենք պատմել այդ համագործակցությունների մասին, ինչ արդյունքներ են գրանցվել:
16. Ունե՞ք ներկայացուցիչներ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի կազմում: Ինչպե՞ս եք գնահատում այդ խորհրդի գործունեության արդյունավետությունը և ազդեցությունը Ձեր համայնքի, Ձեր դպրոցի գործունեության վրա:
17. ԱԽ անդամ չհանդիսացող, դպրոցի սովորողները երբևէ դիմել են Ձեզ որևէ խնդրի լուծման նպատակով: Ինչ քայլեր եք ձեռնարկել, ի՞նչ արդյունքներ են գրանցվել:

18. Կամավորական հիմունքներով ինչպիսի՞ միջոցառումներ եք իրականացրել երբևէ (օրինակ՝ օգնել եք դպրոցի սովորողներից որևէ մեկին, համայնքում իրականացրել եք աղբահանության կամ այլ ծրագրեր և այլն): Դրանց մասնակցել են միայն ԱԽ անդամները, թե դպրոցի սովորողներն առհասարակ: Ըստ ձեզ, որո՞նք են սովորողների կամավորությամբ զբաղվելու հիմնական շարժառիթները:
19. Հետազոտությունները ցույց են տվել, որ դպրոցի սահմաններից դուրս նայելու եւ համայնքի համար որեւէ բան անելու մասին շատ քիչ աշակերտներ են մտածում: Ըստ Ձեզ ինչով է դա պայմանավորված: Կպատմե՞ք դպրոցից դուրս՝ Ձեր համայնքում ԱԽ գործունեության և իրականացրած ծրագրերի մասին:
20. Հետազոտությունները ցույց են տվել, որ կամավորական աշխատանքի նկատմամբ համապատասխան հանրային ընկալում զարգացնելու հարցում կարևոր դերակատարում կարող են ունենալ դպրոցների հետ աշխատող ՀԿ-ները: Ըստ ձեզ ինչով է դա պայմանավորված: Դուք համագործակցու՞մ եք ՀԿ-ների հետ: Եթե այո, խնդրում ենք պատմել ինչպիսի ծրագրերի շրջանակներում: Եթե՝ ոչ, ինչո՞վ է դա պայամնավորվա՞ծ: ՀԿ-ներն իրե՞նք են գտնում դպրոցներին, թե՞ ԱԽ-ները ևս կարող են ակտիվություն և նախաձեռնողականություն ցուցաբերել ու դիմել ՀԿ-ներին, մասնակցել վերջիններիս կողմից իրականացվող ծրագրերին:

**ԱԽ-ի խորհրդատվական ձայնը**

21. Հետազոտությունները ցույց են տվել, որ աշակերտական խորհուրդները, որպես կանոն, չեն օգտագործում իրենց խորհրդատվական ձայնը դպրոցի խորհուրդներում, չափազանց պասիվ են դպրոցի ներքին կյանքը կանոնավորող նորմերի մշակման կամ գործադրման հարցում, գործնականում չեն ներկայացնում ու պաշտպանում աշակերտների շահերը և իրավունքները: Ի՞նչ կասեք այս մասին: Երբևէ դպրոցի սովորողները դիմե՞լ են Ձեզ առաջարկություններով ու դիմումներով, ի՞նչ ընթացք եք տվել դրանց:
22. Հետազոտությունները ցույց են տվել, որ շատ հաճախ խորհուրդների աշխատանքը թափանցիկ չէ: Հասանելի չեն ու ոչ միշտ են հրապարակվում խորհուրդների որոշումները: Ինչ կասեք այս մասին: Ի՞նչ պարբերականությամբ են գումարվում ձեր ԱԽ նիստերը, արդյո՞ք դրանք արձանագրվում և հրապարակվում են:
23. Առկա են նաև հետազոտություններ, ըստ որոնց տնօրենները փորձում են ղեկավարության կցորդ դարձնել ԱԽ-ներին, դրանք չեն կարողանում ազատորեն գործել: Ի՞նչ եք կարծում, ինչո՞վ է դա պայմանավորված:
24. Մասնակցու՞մ եք դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի նիստերին: Հիմնականում ի՞նչ հարցեր են քննարկվում Ձեր մասնակցությամբ: Երբևէ առաջարկություններ ներկայացրե՞լ եք հաստատության տնօրինությանը, ի՞նչ ընթացք է տրվել դրանց:
25. Երբևէ մասնակցե՞լ եք դպրոցի բյուջեի քննարկման նախնական փուլին: Ներկայացրե՞լ եք առաջարկներ, ի՞նչ բնույթի են եղել դրանք, արդյոք ընդունվե՞լ են: Դպրոցի բյուջեից երբևէ գումար հատկացվե՞լ է ԱԽ-ի ծախսերի համար:
26. Երբևէ մասնակցե՞լ եք դպրոցի գործունեության ներքին գնահատմանը: Ի՞նչ է այն իրենից ներկայացնում, ինչպիսի՞ հարցեր են քննարկվում:
27. Երբևէ հանդիպում ունեցե՞լ եք դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդ/ թեկնածուի հետ: Եթե այո, ինչպիսի՞ հարցեր եք քննարկել:

**Առկա խնդիրներ. խնդիրների լուծման հաջողված պատմություններ**

28. Ետազոտությունները ցույց են տվել, որ կան խնդիրներ, որ հանդիպում են տարբեր կրթական հաստատություններում, օրինակ՝ ճաշարանի/բուֆետի խնդիր, բուլինգ և խտրականություն, դպրոցական և աշակերտական միջավայրերի ներառականության խնդիրներ, աշակերտների վարք, դպրոցական դասագրքերի և գրադարանի խնդիր, համայնքային խնդիրներ և դժվարություններ, աշակերտների՝ դպրոցի խորհուրդներում ներկայացվածության խնդիր և այլն: Ի՞նչ եք կարծում, ի՞նչն է այս խնդիրների տարածվածության պատճառը: Ինչպե՞ս կարելի է լուծել դրանք:
29. Ներկայումս Ձեր դպրոցում ի՞նչ խնդիրներ կան, որ հրատապ լուծում են պահանջում: Որտեղ և ինչպե՞ս եք պատրաստվում բարձրաձայնել այդ խնդիրների մասին:
30. Կա՞ն հաջողված պատմություններ, երբ ԱԽ-ն կարողացել է կարևոր խնդիրներ լուծել կամ մեծ ու կարևոր միջոցառումներ իրականացնել:

Շնորհակալություն մասնակցության համար !

**Հավելված 2**

**ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

(Աշակերտական խորհրդում չընդգրկված աշակերտների համար)

Սույն ուղեցույցը կազմվել է «Աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետության ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Քաղաքացիական հասարակության շրջանում հանրային հաշվետվողականության ապահովման մեխանիզմների ամրապնդման (ՍԱՆԿՈՒՍ)» ծրագրի շրջանակներում:

Քննարկման նպատակն է ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետությունը, ներառյալ՝ աշակերտական խորհուրդների անկախությունը, ինքնավարությունը, ներգրավվածությունն ու մասնակցությունն ու թափանցիկությունը:

Քննարկման արդյունքները վերլուծվելու են ընդհանրական տեսքով և մասնակիցների անձնական տվյալները հրապարակման ենթակա չեն:

*Բոլոր նոթագրումներն ու ձայնագրումները հետապնդում են զուտ մի նպատակ, այն է՝ չկորցնել և չմոռանալ ինչող տեղեկությունը:

| | |
|---|---|
| Քննարկման ամսաթիվ | |
| Քննարկման անցկացման (մարզ, քաղաք/գյուղ) | |
| Դպրոցի անվանումը | |

| | |
|---|---|
| Մասնակիցների քանակը և նկարագիրը՝ որ դասարաններից են, սեռ | |

